ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ուսումնասիրություն

Ուսումնասիրությունն իրականացրել է
Ինֆորմացիայի ազատության կենտրոնը:

ԵՐԵՎԱՆ 2008

Ծրագրի ղեկավար
Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
բ.գ.թ. **Շուշան Դոյդոյան**:

Սույն ուսումնասիրությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Հետազոտության նպատակը եւ մեթոդաբանությունը 4

Տեղեկատվության ազատության մասին օրենսդրություն 6

Հարցումներին մասնակցած լրագրողների ընդհանուր նկարագիրը 16

Տեղեկություն ստանալու իրավունք 19

Տեղեկատվության պաշտոնական եւ այլ աղբյուրներ 22

Պաշտոնական տեղեկատվություն ստանալու՝ լրագրողների փորձը 27

Տեղեկություն ստանալու հարցում 35

Տեղեկատվության մերժում 39

Տեղեկատվության մատչելիության խոչընդոտները 47

Ընտրական գործընթացներում տեղեկություններ ստանալու՝ լրագրողների փորձը 50

Ամփոփում 53

Առաջարկություններ 60

Ներածություն

Առանց բավարար տեղեկատվության լրագրողները չեն կարող իրականացնել հանրությանն իրազեկելու՝ իրենց հիմնական առաքելությունը: Լրագրողների՝ տեղեկություն ստանալու իրավունքի ոտնահարումները հանգեցնում են ողջ հասարակության տեղեկություն ստանալու իրավունքի խախտմանը:

2003 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունվեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաեւ՝ «ՏԱ մասին» օրենք): Այնուամենայնիվ, մինչ օրս «ՏԱ մասին» օրենքի կիրառումը շարունակում է լուրջ խնդիր մնալ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ լրագրողների եւ ողջ հասարակության համար: Գործնականում տեղեկատվություն ստանալիս լրագրողներն հանդիպում են մի շարք խոչընդոտների եւ դժվարությունների: Ներկա իրավիճակը պայմանավորող հիմնական պատճառներից է այն, որ պետական կառույցներում տեղեկատվություն տնօրինող պաշտոնյաները տեղեկատվություն չեն տրամադրում՝ օրենքով ամրագրված իրենց պարտականությունների մասին բավարար տեղեկացված չլինելու պատճառով, իսկ լրագրողները լիովին չեն օգտվում տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքից ՏԱ օրենսդրությունն օգտագործելու համար բավարար գիտելիք եւ հմտություններ չունենալու պատճառով:

Հետազոտության նպատակը եւ մեթոդները

Այս ուսումնասիրման նպատակն է խթանել տեղեկատվության մատչելիությունը ՀՀ ԶԼՄ-ների համար՝

- ամփոփելով պետական մարմիններից տեղեկատվություն ստանալու լրագրողների փորձը «ՏԱ մասին» օրենքի ընդունումից ի վեր (2003թ.-ից մինչ օրս),
- դիտարկելով, թե որքանով արդյունավետ են կարողանում լրագրողներն օգտագործել տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքը եւ ՏԱ մասին օրենսդրությունն իրենց ամենօրյա աշխատանքում, եւ որքանով հրապարկային եւ բաց են աշխատում պետական մարմինները ԶԼՄ-ների համար,
- պարզելով լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքին սպառնացող առկա խոչընդոտներն ու հիմնախնդիրները. ինչպիսի՞ արգելքների են հանդիպում լրագրողներն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում պե-

տական մարմիններից տեղեկատվություն ստանալիս եւ ինչ-պիսի՞ մեխանիզմներից են նրանք օգտվում խախտված իրավունքը վերականգնելու համար:

Այս նպատակով 2007թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հարցազրույցներ են անցկացվել 105 լրագրողների հետ, որոնցից 60-ը ներկայացնում են երեւանյան ԶԼՄ-ներ, 40-ը՝ մարզային, իսկ 5-ը՝ Հայաստանում գործող արտասահմանյան ԶԼՄ-ներ: Հարցազրույցների քանակական եւ որակական տվյալների հիման վրա աշխատանքային խումբը կազմել է սույն ուսումնասիրությունը: Մշակվել են նաեւ հատուկ առաջարկություններ՝ ուղղված լրագրողների՝ ՏԱ ոլորտում ունեցած գիտելիքի եւ օրենսդրության օգտագործման մեխանիզմների բարելավմանը, ինչպես նաեւ լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի առավել լայն պաշտպանության ապահովմանը:

Հարցազրույցներն անցկացվել եւ ուսումնասիրությունը կազմվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից:

ԲԱԺԻՆ Ա

Տեղեկատվության ազատության մասին օրենսդրություն

ՀՀ Սահմանադրություն

2005 թ.-ի նոյեմբերին ընդունված սահմանադրական փոփոխություններով տեղեկություններ ստանալու իրավունքը հռչակվել է որպես սահմանադրական իրավունք: Տեղեկություններ ստանալու իրավունքը ճանաչվել է որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը:

ՀՀ Սահմանադրության Հոդվածներ 27 եւ 27.1 հոդվածներնեռում ամրագրված են արտահայտվելու ազատությունը եւ տեղեկություններ ստանալու իրավունքը: Հոդվածներ 23-ը եւ 33.2-ը լրացուցիչ երաշխիքներ են նախատեսում պետական մարմիններում պահվող տեղեկություններին ծանոթանալու իրավունքի համար:

Հոդված 27

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխել այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը»:

Հոդված 27.1

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»։

Սահմանադրության Հոդված 23-ը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք։

Սահմանադրության Հոդված 33.2-ը հռչակում է բնապահպանական տեղեկությունների մատչելիությունը.

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը եւ բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ եւ այլոց հետ համատեղ պահպանել եւ բարելավել շրջակա միջավայրը։

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումը մերժելու համար»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (2003թ.)

ՀՀ Ազգային Ժողովը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունել է 2003թ.-ի սեպտեմբերի 23-ին։ Այն ուժի մեջ է մտել 2003թ.-ի նոյեմբերի 15-ին։ Օրենքի գործողությունը տարածվում է ոչ միայն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաեւ հանրությանը որոշ ոլորտներում ծառայություններ մատուցող կամ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող մասնավոր կազմակերպությունների վրա։

Չնայած օրենքն արդեն գործում է 4 տարուց ավելի, կառավարությունը դեռեւս չի ընդունել օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերը, որոնք պետք է նպաստեն օրենքի կիրառմանը։

ՏԱ օրենքը հնգօրյա ժամկետ է սահմանում տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու համար։ Եթե հարցման մեջ նշված տեղեկությունները տրամադրելու համար անհրաժեշտ է

կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունները դիմողին են տրվում հարցումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունները տրամադրելու վերջնական ժամկետը։

ՏԱ օրենքը նաեւ պահանջում է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները պարբերաբար, տարին առնվազն մեկ անգամ, հրապարակեն իրենց գործունեությանն առնչվող տեղեկություններ, օրինակ՝ հանրության համար իրականացվող աշխատանքները եւ ծառայությունները, բյուջեն, հաստիքացուցակները, պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատավարձը, աշխատանքի վայրի հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ այդ տեղեկությունների տրամադրման կարգը, շրջակա միջավայրի վրա ներգործությունը եւ այլն։

ՏԱ օրենքում նաեւ հստակ նշված են տեղեկատվության մերժման հիմքերը եւ կարգը, որը պահանջում է, որ բոլոր մերժումները հիմնավորվեն՝ ըստ օրենքով սահմանված հիմքերի։ Այդ դրույթները նպատակ ունեն կանխելու պաշտոնյաների կամայականությունները։

Հայաստանի ՏԱ օրենքի առավելություններից մեկն այն է, որ օրենքը իրավական պաշտպանություն է նախատեսում խախտումների կամ ապօրինությունների մասին ահազանգող պաշտոնյաների համար։ Հոդված 8-ում սահմանված են տեղեկությունների երեք խմբեր, որոնք չեն կարող գաղտնի համարվել եւ պետք է անհապաղ հրապարակվեն։ Խոսքը գնում է, օրինակ, այն տեղեկությունների մասին, որոնք վերաբերում են քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ աղետներին եւ դրանց հետեւանքներին։ Այդ կարգի տեղեկությունների տրամադրումը (նույնիսկ եթե դրանք գաղտնի են համարվում) որեւէ պաշտոնյայի կողմից չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն (Հոդված 14)։

ՏԱ օրենքը պահանջում է, որ պետական մարմինները նշանակեն ՏԱ համար պատասխանատու անձ տեղեկություն ստանալու հարցումներն ընդունելու եւ դրանց ընթացք տալու համար։

ՏԱ օրենքի հոդված 13-ում նշված է.

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակված պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը։

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,
2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը,
3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները։

Օրենքում նշված է, որ օրենքի խախտմամբ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» եւ ՀՀ Քրեական օրենսգրքերով սահմանված պատասխանատվություն։

Տեղեկատվության ազատության մասին դրույթներ են պարունակում «Քրեական դատավարության» եւ «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքերը, համաձայն որոնց քրեական գործերի դատական քննությունը եւ դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է՝ օրենքով նախատեսված որոշ սահմանափակումներով։ «Քաղաքացիական դատավարության» օրենսգրքի Հոդված 8-ի համաձայն՝ գործերի քննությունը կարող է դռնփակ լինել, եթե խոսքը գնում է որդեգրման գործերի կամ քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու մասին։ «Քրեական դատավարության» օրենսգրքի Հոդված 16-ի համաձայն, դռնփակ դատական քննություն անցկացվում է օրենքով նախատեսված դեպքերում՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական ան-վտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով։

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք (2003թ.)

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը երաշխավորում է զանգվածային լրատվության միջոցների եւ զանգվածային լրատվության միջոցներում աշխատող լրագրողների՝ առանց ապօրինի սահմանափակումների աշխատելու իրավունքը։ Այն վերահաստատում է տեղեկություններ փնտրելու, ստանալու եւ տարածելու սահմանադրական իրավունքը։ Այն արգելում է գրաքննությունը, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը, առանց ծանր հանցագործություններ բացահայտելու անհրաժեշտությամբ պայմանավորված դատարանի որոշման տեղեկատվության աղբյուրները բացահայտելը, եւ պահանջում է, որ պետական մարմինները խտրականություն չդնեն լրագրողների միջեւ։

Քրեական օրենսգիրք եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի՝ 2003թ.-ի դեկտեմբերի 1-ին ընդունված փոփոխությունների համաձայն (Հոդված 1, կետ 1), տեղեկություններ տրամադրելու պարտականությունն ապօրինի չկատարելու դեպքում պաշտոնատար անձը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ նույն խախտումը կրկնելու դեպքում՝ հիսնապատիկից հարյուրապատիկի չափով։

Քրեական օրենսգրքի Հոդված 148-ի համաձայն, անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող եւ սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին եւ օրինական շահերին վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով։

Հոդված 282-ով քրեականացված է շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը։ Այդ խախտումը կատարած պաշտոնատար անձը կարող է պատժվել ազատազրկմամբ կամ մինչեւ երեք տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով։

Սակայն, վարչական եւ քրեական այս պատժամիջոցներից եւ ոչ մեկն առ այսօր գործնականում չի կիրառվել։ Դատական պրակտիկայում հայցվորները պահանջում են միայն տեղեկությունների տրամադրում եւ դատական ծախսերի փոխհատուցում, եւ չեն պահանջում պատասխանող կողմի նկատմամբ պատժամիջոցների կիրառում։

Պետք է նշել նաեւ, որ Քրեական օրենսգիրքը հատուկ երաշխիքներ է նախատեսում լրագրողների կողմից տեղեկություններ ստանալու իրավունքի համար։ Հոդված 164-ը պաշտպանում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը, այդ թվում՝ տեղեկություններ ստանալու իրավունքը, որը լրագրողի մասնագիտական օրինական գործունեության մաս է կազմում։

Հոդված 164-ի համաձայն՝

1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով։
2. Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, պատժվում է ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա։

Պետք նշել, որ առաջին անգամ այս հոդվածը կիրառվել է 2004 թ.-ի հոկտեմբերի 11-ին։ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը մեղավոր է ճանաչել թիկնապահին, ով Ծաղկաձորում հարձակվել էր լրագրողների վրա եւ թույլ չէր տվել, որ վերջիններս լուսանկարեն։ Դատարանը նրան դատապարտել էր վեց ամսվա ազատազրկման։ Դա առաջին դեպքն էր Հայաստանում, երբ անձը դատապարտվել է ազատազրկման լրագրողների աշխատանքն ապօրինի խոչընդոտելու եւ տեղեկություններ ստանալու նրանց իրավունքը սահմանափակելու համար։

Բնապահպանական օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունը 1998թ.-ին ստորագրել եւ 2001 թ.-ին վավերացրել է Օրհուսի կոնվենցիան։ Կոնվենցիան երաշխավորում է մարդկանց՝ բնապահպանական տեղեկություններ ստանալու իրավունքը։

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքը պահանջում է, որ պետական մարմինները զանգվածային լրատվության միջոցներին տեղեկացնեն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների մասին եւ հանրային լսումներ կազմակերպեն։

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք (2002թ.)

«Անհատական տվյալների մասին» օրենքը նախատեսում է, որ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի անվճար ստանալ իր մասին անհատական տեղեկություններ։

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենք (2004թ.)

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը քաղաքացիներին իրավունք է տալիս դիմումներ եւ բողոքներ ուղարկել պետական մարմիններին։ Օրենքը պահանջում է, որ քաղաքացիների դիմումներին ու բողոքներին պատասխան տրվի մեկ ամսվա ընթացքում։

Տեղեկատվության մերժում

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի Հոդված 8-ում թվարկված են հինգ դեպքեր, երբ տեղեկատվությունը կարող է մերժվել։ Դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունները՝

1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,
2) խախտում են մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրային եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
5) խախտում են հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները։

Հոդված 8-ի կետ 3-ով սահմանվում են մի շարք դեպքեր, երբ տեղեկատվությունը չի կարող մերժվել, նույնիսկ եթե տեղեկությունները պարունակում են կետ 1-ի համաձայն հրապարակման ոչ ենթակա տվյալներ։ Այսպես, տեղեկությունների տրամադրումը չի կարող մերժվել, եթե դրանք՝

1) վերաբերում են քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին,
2) ներկայացնում են Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,
3) չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր եւ մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա։

Այս կարգի գաղտնի տեղեկությունների հրապարակումը օրենքի առաջ պատասխանատվություն չի առաջացնում։ Հոդված 14-ի կետ 2-ի համաձայն, ՏԱ օրենքի Հոդված 8-ի կետ 3-ով նախատեսված դեպքերում տեղեկությունների հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն։

Տեղեկատվությունը մերժելիս պետական մարմինը պետք է հիմնավորի մերժումը՝ հղում կատարելով օրենքով նախատեսված մերժման հիմքերին։

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք (1996թ.)

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը սահմանում է տեղեկությունների դասակարգման համապարփակ մի համակարգ։

Օրենքով պաշտպանվում են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ռազմական բնագավառին (այդ թվում՝ տեղեկություններ զինված ուժերի ռազմավարական եւ օպերատիվ պլանների, զորքերի ծավալման, ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, զինված ուժերի կառուցվածքի եւ տեղաբաշխման մասին), արտաքին հարաբերությունների եւ արտաքին տնտեսական գործունեության բնագավառին, տնտեսության, գիտության եւ տեխնիկայի բնագավառին (տեղեկություններ պաշտպանական ծրագրերի եւ ռազմամթերքի արտադրության, թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի, պետական պահուստների, պետության ֆինանսների եւ բյուջետային քաղաքականության մասին) եւ հետախուզական բնագավառին (տեղեկություններ հակահետախուզական գործունեության, հետախուզական մարմինների հետ համագործակցող անձանց, պետական ծածկագրերի եւ պետական ու ծառայողական գաղտնիքի պաշտպանության մասին)։

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հատուկ դեպքեր, երբ տեղեկությունները չեն կարող գաղտնի պահվել։ Այդ դեպքերը նման են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով նախատեսված դեպքերին։ Պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի մասին տեղեկությունները, տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առեւտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները, օրենքի խախտման կամ քաղաքացիների իրավունքների ոտնահարման մասին տեղեկությունները, կամ էլ այն տեղեկությունները, որոնք, եթե դասվեն պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան կառավարության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման ծրագրերի վրա։

Սահմանված են գաղտնիության երեք աստիճաններ՝ «հատուկ կարեւորության», «հույժ գաղտնի» եւ «գաղտնի»։ Գաղտնիության

առաջին երկու աստիճաններն ունեցող տեղեկությունները որպես գաղտնիք պահվում են մինչեւ 30 տարի։ «Գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող փաստաթղթերը համարվում են «ծառայողական գաղտնիքներ» եւ կարող են գաղտնի պահվել մինչեւ 10 տարի։ Տեղեկություններին տրված գաղտնիության աստիճանը պետք է վերանայվի 5 տարին մեկ։ Գաղտնագրման մասին որոշումը կարող է բողոքարկվել։ Գաղտնազերծված տեղեկությունները պետք է եռամսյա ժամկետում հանձնվեն պետական արխիվ։

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք (2003թ.)

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի Հոդված 7-ով նախատեսված են որոշակի տեղեկությունների հրապարակման սահմանափակումներ։ Այսպես՝ արգելվում է գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտող տեղեկությունների հրապարակումը։ Արգելվում է նաեւ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկությունների տարածումը, եթե դրանք ստացվել են առանց տվյալ անձին տեսաձայնագրման մասին զգուշացնելու, բացի այն դեպքերից, եթե հրապարակումն «անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»։

ՀՀ Քրեական օրենսգիրք

Քրեական օրենսգիրքը բազմաթիվ հոդվածներ է պարունակում, որոնք սահմանափակում են որոշ տեղեկությունների հրապարակումը։ Դրանք են՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկությունների (Հոդված 144), բժշկական գաղտնիքի (Հոդված 145), նամակագրության, հեռախոսային խոսակցությունների եւ այլ հաղորդումների գաղտնիության (Հոդված 146), լրտեսության (Հոդված 302), պետական գաղտնիք հրապարակելու (Հոդված 306), պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ վարվելու կանոնները խախտելու (Հոդված 307), նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու (Հոդված 342) մասին հոդվածները։

ԲԱԺԻՆ Բ

Հարցումներին մասնակցած լրագրողների ընդհանուր նկարագիրը

Հարցմանը մասնակցել է 105 լրագրող: Պատասխանողների ընդհանուր պատկերը հետեւյալն է.

- Երեւանյան ԶԼՄ ներկայացուցիչներ 60 հոգի կամ 57%
- ՀՀ մարզային լրագրողներ 40 հոգի կամ 38%
- Հայաստանում օտարերկրյա ԶԼՄ թղթակիցներ 5 հոգի կամ 5%

105 լրագրողներից 35-ը (33%) ներկայացնում են հեռուստատեսությունը: Տպագիր լրատվամիջոցները ներկայացնում են հարցվածներից 32-ը (30.4%): Հարցմանը մասնակցած լրագրողներից ռադիոյում (մասնավոր եւ հանրային) են աշխատում 16 լրագրող (15%): 10 լրագրող (9.5%) լրատվական գործակալությունների աշխատակիցներ են: 12 լրագրող (11.4%) աշխատում է ցանցային լրատվամիջոցում: Ցանցային լարտվամիջոցները ներկայացնող բոլոր լրագրողները Երեւանից են, քանի որ լրատվության այս տեսակը դեռեւս իր զարգացումը չի գտել մարզերում Ինտերնետի ցածր մատչելիության եւ որակի պատճառով:

Հարցումներին պատասխանած 105 լրագրողներից 68-ը (65%) կին է, 37-ը՝ տղամարդ (35%): Չնայած հարցումներն անցկացնող խումբը փորձել է հավասարապես ներգրավել տղամարդ եւ կին լրագրողներին, այնուհանդերձ լրատվամիջոցներում հանդիպել է առավելապես կին լրագրողների: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Հայաստանյան լրատվամիջոցներում կին լրագրողները մեծամասնություն են կազմում, եւ այս մասնագիտությունն այսօր գլխավորապես դարձել է կանացի մասնագիտություն: Այս հանգամանքին լրացնում է նաեւ այն, որ ժուռնալիստիկա մասնագիտությունը նաեւ երիտասարդանում է: Այսօր լրագրության մեջ ներգրավված են ավելի շատ երիտասարդներ, քան 40 տարեկանից բարձր մարդիկ: Այսպես՝ հարցված լրագրողների տարիքային սանդղակը հետեւյալ պատկերն ունի.

- 18-ից 24 տարեկան 36 հոգի կամ 34%
- 25-ից 40 տարեկան 52 հոգի կամ 49%
- 40 տարեկանն անց 17 հոգի կամ 17%

Հատկանշական է, որ ՀՀ մարզերում հարցված լրագրողներից ընդամենը երեքն են 40 անց տարիքի: Այս հանգամանքը թերեւս կարելի է բացատրել սոցիալական խնդիրներով, քանի որ մարզերում այսօր լրագրողները խիստ ցածր են վարձատրվում, եւ միայն երիտասարդներն են կարողանում աշխատել այս մասնագիտությամբ, հաճախ ոչ թե գումար վաստակելու, այլ՝ խանդավառությամբ կամ գաղափարների իրագործման համար:

Բացառիկ ցուցանիշ է լրագրողների կրթվածության մակարդակը. հարցմանը մասնակցած 105 հոգուց 103-ը (կամ 98%) ունեն բարձրագույն կրթություն: Միջնակարգ կրթություն ունեն միայն երկուսը: Ընդ որում, 65% ունի բարձրագույն լրագրողական կրթություն, իսկ 35% ունի բարձրագույն կրթություն ամենատարբեր ոլորտներում՝ տնտեսագիտություն, պատմություն, փիլիսոփայություն, աշխարհագրություն եւ այլն: Թեեւ պետք է նշել, որ այլ մասնագիտություններում գերակշռում են հումանիտար գիտությունները, մասնավորապես՝ բանասիրությունը (13 հոգի կամ 12.3%):

Աչքի է ընկնում նաեւ հարցված լրագրողների մասնագիտական երկարամյա փորձառությունը: Հարցվածների 40%-ը ունի 6-10 տարվա մասնագիտական փորձ: Տասը եւ ավելի տարիների մասնագիտական աշխատանքային փորձ ունի լրագրողների 24%: Երեքից հինգ տարվա լրագրողական փորձ ունեն հարցվածների 16 տոկոսը, իսկ 12 տոկոսը՝ մեկից երկու տարվա: 10 հոգի կամ 8% մեկ տարուց պակաս է աշխատում այս ոլորտում:

Լրագրողներից 15-ը նշել է, որ միայն լուր է հաղորդում: Նրանք հիմնականում լրատվական գործակալությունների լրագրողներն են: 4-ը՝ միայն հետաքննական եւ վերլուծական նյութեր են անում, իսկ մնացածները պատրաստում են մեկից ավելի ժանրերի նյութեր: Ընդ որում, լուրի հետ մեկտեղ շատերը նշում են նաեւ վերլուծական նյութերը: Հետաքննությամբ զբաղվող լրագրողները եւս վերլուծական հոդվածներ են պատրաստում: Պետք է նշել, որ հեռուստատեսային եւ լրատվական գործակալության ոչ մի լրագրող չի նշել հետաքննությունը: Եթե լրատվական գործակալության լրագրողի դեպքում հասկանալի է, որ հետաքննությունները նրանց նեղ մասնագիտական ուղղությունը չեն, ապա հեռուստատեսության դեպքում այս հանգամանքը ցույց է տալիս, որ մեզանում դեռեւս զարգացած չէ հեռուստատեսային հետաքննության ժանրը: Այներկարատեւ եւ բավականին ծախսատար աշխատանք է պահանջում, որն այսօր իրենց չեն կարող թույլ տալ հեռուստաընկերությունները:

Այսպիսով, ընդհանուր պատկերը հետեւյալն է.

Լրագրողները հիմնականում գրում եւ հրապարակում են.

- լուր 64.7%,
- վերլուծական նյութ 42%,
- հետաքննական նյութ 24%,
- ժամանցային նյութ 11.4%:

Բոլոր հարցվածները նշել են, որ լուսաբանում են մեկից ավելի ոլորտ, ընդ որում, այդ ոլորտները երբեմն շատ քիչ ընդհանուր բան ունեն, ասենք՝ մշակույթ եւ դատական համակարգ, կամ կրթություն եւ քաղաքականություն: Սա հատկանշական է հատկապես լուրեր հաղորդող լրագրողների դեպքում: Տասներկու հոգի (30%) նշել է, որ լուսաբանում է ամենատարբեր ոլորտներ՝ ըստ տվյալ պահի անհրաժեշտության:

Թե՛ տպագիր, թե՛ էլեկտրոնային լրատվամիջոցներում աշխատող լրագրողների համար ամենահաճախ լուսաբանվող ոլորտը քաղաքականությունն է՝ 70%: Սոցիալական ոլորտն առավելապես լուսաբանվում է մարզային եւ տպագիր մամուլի ներկայացուցիչների կողմից՝ 55%: Տնտեսական եւ կրթական ոլորտները հավասարաչափ են լուսաբանվում՝ 43%: Նմանապես մշակութային եւ բնապահպանական խնդիրները 41% լրագրողների կողմից են վեր հանվում: Իրավական թեմաներով գրում է հարցվածների 32%-ը, սպորտային նյութեր պատրաստում է 18%-ը:

Այսպիսով, ընդհանրացնելով հարցման արդյունքները, հարկ է նշել, որ այսօր Հայաստանում լրագրությամբ զբաղվում են հիմնականում երիտասարդները եւ կանայք, ընդ որում, այս ցուցանիշն արձանագրվել է թե՛ Երեւանում, եւ թե՛ մարզերում: Լրագրողների գերակշիռ մասն ունի բարձրագույն լրագրողական կրթություն: Լրագրության մեջ, ըստ հարցումների, այսօր ամենատարածված ժանրը լուրն է, այնուհետեւ՝ վերլուծական հոդվածները: Կարելի է արձանագրել նաեւ, որ լրագրողներն ամենաշատը լուսաբանում են քաղաքականություն:

ԲԱԺԻՆ Գ

Տեղեկություն ստանալու իրավունք

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տեղեկատվություն ստանալու իրավունքին առնչվող իրավական դրույթներին ծանոթ են հարցված 105 լրագրողներից 98-ը կամ 93%-ը, բացասական պատասխան են տվել 7-ը (7%): Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին անտեղյակ լրագրողների թիվը գերակշռում է. հարցվածներից 20-ը (19%): 15 հոգի պատասխանել է, որ գիտի, բայց չի հիշում:

Ե՛ւ Սահմանադրությանը, եւ՛ օրենքին ծանոթ լրագրողները հիմնականում նշել են, որ Սահմանադրությունը եւ ՏԱ մասին օրենքը սահմանում են, որ «Յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ ստանալու իրավունք»: Զարմանալի էր երեւանյան թերթերից մեկի 40-ն անց լրագրողի պատասխանը. թեեւ նա ծանոթ էր իրավական նորմերին, սակայն նշել էր, որ դեմ է խոսքի ազատությանը:

Հարցմանը մասնակցած օտարերկրյա ԶԼՄ 5 ներկայացուցիչները այս երկու հարցին դրական պատասխան են տվել՝ ճշգրտորեն մեջբերելով համապատասխան դրույթները: Թեպետ տեղեկատվություն ստանալու իրավական հիմքերն իմացող լրագրողների թիվը մեծ մասն է կազմում, այնուհանդերձ, ինչպես ցույց են տալիս հարցումների մեկ այլ խմբի պատասխանները, տեղեկություններ ստանալու գրավոր հարցումներ անելիս լրագրողների մեծամասնությունը՝ 59 տոկոսը, հղում չի անում օրենքներին (տես՝ Բաժին Զ «Տեղեկություն ստանալու հարցում»): Այսինքն, գործնականում օրենքները չեն օգտագործվում լրագրողների մեծ մասի կողմից: Այս միտքն է ապացուցում նաեւ այն, որ տեղեկություններ ստանալու հարցումների ապօրինի մերժումների ժամանակ լրագրողներից շատերն իրենց խախտված իրավունքները չեն բողոքարկում դատարանում, հաճախ հանդիպող պատճառաբանություններից է այն, որ պարզապես չեն վստահում դատարաններին եւ կամ դատական պրոցեսների քաշքշուկների մեջ չեն ցանկանում հայտնվել:

Գրեթե բոլոր լրագրողներն այն կարծիքն են հայտնել, որ տեղեկություն տրամադրելիս պաշտոնյաները խտրականություն են դնում քաղաքացիների եւ լրագրողների միջեւ, հօգուտ վերջիններիս: 105 հոգուց միայն 3-ն են կարծում, որ տարբերություն չկա, բայց նրանցից 2-ը այդ հանգամանքը բացատրում են նրանով, որ

թե՛ լրագրողներին, եւ թե՛ քաղաքացիներին պաշտոնյաներն անհրաժեշտ ինֆորմացիան չեն տալիս: Իսկ պաշտոնյաների խտրական վերաբերմունքը 102 լրագրողների մեծամասնությունը բացատրում է այն բանով, որ պաշտոնյաները վախենում են լրագրողներից կամ նրանց հետ առավել զգաստացած են: «Վախենում են, որ քննադատության կենթարկվեն լրագրողների կողմից կամ կկորցնեն իրենց աթոռը»,- այսպես է մեկնաբանել իր պատասխանը մարզային լրագրողներից մեկը:

Կան նաեւ մի քանի այլ բացատրություններ, ինչպես օրինակ՝ լրագրողները տեղյակ են իրենց իրավունքներից եւ կարողանում են պաշտպանել դրանք, մինչդեռ քաղաքացիներն առավել անտեղյակ են իրենց իրավունքներից: Միաժամանակ լրագրողները նշում են, որ պաշտոնյաները հաճախ խտրականություն են դնում նաեւ տարբեր լրագրողների միջեւ. մեկին մերժում են տալ տեղեկատվություն, իսկ մեկ ուրիշ լրագրողի սիրով տրամադրում են: Այս խտրական վերաբերմունքը հիմնականում նկատվում է ընդդիմադիր եւ իշխանամետ լրատվամիջոցների ներկայացուցիչների դեպքում: Գյումրիի լրագրողը պատմում է մի դեպք, երբ թաքցնելով իր լրագրող լինելը փորձել է այլ քաղաքացիների հետ սպասել, թե պաշտոնյան երբ կտրամադրի պահանջվող տեղեկատվությունը: Ժամեր շարունակ ստիպված է եղել սպասել, քանի որ, քարտուղարուհու խոսքերով, պաշտոնյան խորհրդակցության է եղել, սակայն երբ ցույց է տվել իր լրագրողական վկայականը, պաշտոնյան վերջապես դուրս է եկել առանձնասենյակից:

Սյունիքի մարզի լրագրողներից մեկը նույնպես փաստում է, որ գործնականում առկա է խտրականություն: Նա սա բացատրում է այն հանգամանքով, որ պաշտոնյաները հաճախ ժամանակ չեն ունենում բոլոր դիմողներին տալ տեղեկատվություն եւ նախընտրում են աշխատել լրագրողների հետ, որոնք իմանալով՝ այնուհետեւ տեղեկությունը կհայտնեն հանրությանը:

Այսպիսով, թեեւ հարցմանը մասնակցած 105 լրագրողից 98-ը կամ 93%-ը նշել է, որ ծանոթ է տեղեկատվություն ստանալու իրավական հիմքերին, մասնավորապես ՀՀ սահմանադրությամբ ամրագրված տեղեկատվության ազատությանն առնչվող դրույթներին եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, այնուհանդերձ գործնականում ոչ բոլորն են օգտվում օրենքով սահմանված իրենց իրավունքներից, մասնավորապես, երբ պաշտոնյաները կամայականորեն մերժում են տեղեկություններ տրամադրել: Ինչպես ցույց են տալիս, Է Բաժնում ներառված հարցումների արդյունքները, 105 լրագրողներից 67-ը կամ 63.8% նախընտրում է այդ

մասին պարզապես հրապարակել նյութում: 105-ից միայն 29-ը կամ 27.6%-ն է պատրաստ անօրինական մերժումների դեպքում դիմել դատարան: Հիմնավորումներից է այն, որ պարզապես չեն հավատում կամ վստահում դատարանին, որ վերջինս կարող է հանդես գալ իրենց իրավունքները վերականգնող արդար եւ անկողմնակալ մարմնի դերում: Ինչպես նաեւ տեղեկատվությունը դատական երկար քննության ընթացքում հնանում է, եւ այն ստանալու անհրաժեշտությունը վերանում է: Մեկ այլ արդյունք եւս խոսում է այն մասին, որ լրագրողները գործնականում չեն կիրառում ՏԱ մասին օրենքի դրույթները: Լրագրողները պաշտոնյաներին տեղեկատվության գրավոր հարցումներ հազվադեպ են ուղարկում՝ 69 հոգի 65.7%: Հատկանշական է նաեւ, որ 105 լրագրողից 25-ը տեղեկատվությունը գրավոր ներկայացնելու անհրաժեշտություն երբեք չի ունեցել: Նշենք, սակայն, որ գրավոր դիմելը կարող է լրագրողներին ապահովել ապօրինի մերժումներից. գրավոր հարցմանը պաշտոնյաներն առավել զգույշ են վերաբերվում եւ ստիպված են լինում պատասխանել: Իսկ մերժելու դեպքում ստիպված են հղում կատարել օրենքով սահմանված օրինական հիմքին, ինչը պարտադիր չէ բանավոր մերժման դեպքում: Ի վերջո, գրավոր մերժումները կարող են բողոքարկման ապացույց-հիմք դառնալ:

Լրագրողները փաստում են նաեւ, որ չնայած տեղեկություններ ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, պաշտոնյաները խտրականություն են դնում քաղաքացիների եւ լրագրողների միջեւ: Խտրական վերաբերմունք է նկատվում նաեւ տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչների հանդեպ: Լրագրողները նման վերաբերմունքը բացատրում են այն հանգամանքով, որ պաշտոնյաները կա՛մ տեղյակ չեն տեղեկությունների տրամադրման իրավական հիմքերից, կա՛մ զգուշանալով լրագրողներից՝ աշխատում են խնդիրներ չունենալ նրանց հետ, իսկ քաղաքացիներն այս իմաստով առավել անպաշտպան են:

ԲԱԺԻՆ Դ

Տեղեկատվության պաշտոնական եւ այլ աղբյուրներ

Լրագրողների 92%-ը, այսինքն ճնշող մեծամասնությունը, որպես լրատվության աղբյուր նախապատվությունը տալիս է պետական մարմիններին, այնուհետեւ հաջորդում են փորձագետները՝ 72% եւ պետական մարմիններում ունեցած նրանց անձնական կապերը՝ 65%: Հասարակական կազմակերպությունների օգնությանը դիմում է լրագրողների 52%: Ուշագրավ է, որ մարզային լրագրողներն ավելի են վստահում մարզային պետական մարմիններին եւ այնտեղ ունեցած իրենց անձնական կապերին, քան Երեւանյան ՁԼՄ-ների ներկայացուցիչները: Հետաքրքիր է նաեւ այն փաստը, որ եթե երեւանյան եւ օտարերկրյա լրատվամիջոցների լրագրողները որպես տեղեկատվության լրացուցիչ աղբյուր նշել են նաեւ ինտերնետը, թերթերը, ապա մարզային ոչ մի լրագրող չի նշել այլ աղբյուրներ՝ ներառյալ ինտերնետը: Սա թերեւս պայմանավորված է այն հանգամանքով, որ այսօր Հայաստանի մարզերում ինտերնետային կապի որակը խիստ ցածր է, եւ լրատվամիջոցներից շատերը, հատկապես հեռավոր մարզերում, ընդհանրապես չեն կարողանում օգտվել ինտերնետից: Մարզային շատ լրագրողներ նշում են, որ Ինտերնետից օգտվում են միայն Ինտերնետ ակումբներում, այն էլ խիստ անհրաժեշտության դեպքում:

Լրագրողների համար տեղեկատվության աղբյուր են ծառայում նաեւ գործընկերները՝ 47%: Լրագրության մեջ քիչ են օգտագործվում ընկերներից եւ հարազատներից ստացված տեղեկությունները: Ըստ հարցման արդյունքների, լրագրողները որպես տեղեկատվության աղբյուր 17%-ով են վստահում ընկերներին եւ հարազատներին:



Որպես տեղեկատվություն ստանալու ամենա-արդյունավետ եւ արագ, ինչպես նաեւ անփոխարինելի միջոց լրագրողները նշում են անմիջական շփումները պաշտոնյաների հետ (75%): Նրանցից շատերը հավելել են նաեւ հեռախոսով, ներառյալ բջջային հեռախոսով տեղեկություն ստանալը (52%):

Լրագրողներից շատերն այն կարծիքին են (47տոկոսը), որ համապատասխան գերատեսչությունների մամլո քարտուղարների հետ լավ հարաբերություններ ունենալը ինֆորմացիայի ձեռք բերման արդյունավետ միջոց կարող է լինել: Մամլո ասուլիսներն եւս օգնում են լրագրողներին տեղեկություններ ստանալ (36 տոկոս):

Հարցմանը մասնակցած 105 լրագրողից միայն 10-ն է ինտերնետից տեղեկատվություն ստանում: Ընդ որում, Ինտերնետից նախընտրում են օգտվել լրատվական գործակալությունների եւ ցանցային լրատվամիջոցների լրագրողները: Հատկանշական է, որ 5 հոգի նշել է, որ ինֆորմացիա ստանալու ամենաարագ եւ արդյունավետ միջոցը միանշանակ ինտերնետն է: Օտարերկրյա եւ ցանցային լրատվամիջոցների լրագրողներներ հավելել են, որ ինֆորմացիա ստանում են նաեւ գերատեսչություններից ստացված էլեկտրոնա-

յին նամակ-հաղորդագրություններից: Եվ մասնավորապես են նշել Արտաքին գործերի նախարարությունը: Իսկ գրավոր հարցումների միջոցով տեղեկություն ստանում է միայն 3 հոգի:

105 լրագրողից 6-ը համոզված է, որ համապատասխան մասնագետին եւ ցանկալի ինֆորմացիան տիրապետող պաշտոնային պետք է ուղղակի դիմել հավաստի տեղեկություն ստանալու համար: Մեկ լրագրող նշել է, որ ինֆորմացիան արագ եւ արդյունավետ հնարավոր է ստանալ միայն այն դեպքում, եթե հարցերը հստակ ձեւակերպվեն եւ գրավոր ներկայացվեն:

Լրագրողների մեծամասնությունը՝ 78 տոկոսը չի օգտվում արխիվային նյութերից, քանի որ անհրաժեշտություն չի եղել: Նրանցից 2-ը նշել են, որ արխիվային նյութերը մատչելի չեն, իսկ 1 հոգի կարծում է, որ դա պարզապես ժամանակի կորուստ է: 23 լրագրող կամ 22% օգտագործել է արխիվային նյութերը հիմնականում մշակութային կամ պատմական թեմաներով հոդվածներ պատրաստելիս:

Պետական գերատեսչության մասին նյութ պատրաստելիս լրագրողների մեծամասնությունն օգտվում է միաժամանակ պաշտոնական ինտերնետային կայքերից (92%) եւ հասարակայնության հետ կապերի բաժնից՝ 90.4%: Նրանցից 3-ը, որոնք լրատվական գործակալության լրագրողներ են, միայն Ինտերնետից են օգտվում: Պաշտոնական տեղեկագրերը քչերի համար են ծառայում որպես տեղեկատվության աղբյուր (48%): 9 հոգի կամ 8.5% նշել է, որ գերատեսչությունների գործունեության մասին տեղեկանում է նաեւ թերթերից, 1 հոգի միայն՝ գերատեսչության ներքին փաստաթղթերից:

Պետական մարմնի գործունեության մասին նյութ պատրաստելիս հարցմանը մասնակից երեւանյան եւ օտարերկրյա ԶԼՄ բոլոր լրագրողներն էլ այլ աղբյուրներից բացի պարտադիր օգտվում են նաեւ պաշտոնական ինտերնետային կայքերից: Ընդ որում, նրանց մեծ մասը ցանցային լրատվամիջոցների կամ լրատվական գործակալությունների լրագրող է: Սակայն միաժամանակ նշում են, որ պաշտոնական ինտերնետային կայքերը չեն թարմացվում պարբերաբար, նաեւ ոչ բոլոր պետական մարմիններն ունեն կայքեր: Թերություններից է նաեւ այն, որ որոշ դեպքերում պետական մարմնի ինտերնետային էջում տեղադրված է լինում խիստ կցկտուր տեղեկատվություն, եւ լրագրողը ստիպված է այն այցելելուց հետո դիմել տեղեկատվության այլընտրանքային աղբյուրների:

Այսպիսով,

հարցված 105 լրագրողների ճնշող մեծամասնությունը տեղեկատվություն է ստանում պետական մարմիններից (92%) եւ փորձագետներից (72%): Հատկանշական է, որ ընկերներից, հարազատներից ստացված տարատեսակ տեղեկությունները լրագրողներից շատ քչերի համար են դառնում նյութի հիմք: Պաշտոնական տեղեկությունները լրագրողներից շատերը (75%) ստանում են ոչ պաշտոնական ճանապարհներով: Նրանք նշում են, որ տեղեկություններն առավել արագ եւ արդյունավետ կարող են ստանալ պաշտոնյաների կամ լրատվության պատասխանատուների հետ անձնական լավ հարաբերություններ ունենալու դեպքում միայն:

Արխիվային նյութեր գրեթե չեն օգտագործվում լրագրողների կողմից: Սա թերեւս պայմանավորված է այն հանգամանքով, որ հարցվածների մեծ մասը միայն լուր է պատրաստում եւ ինֆորմացիան արագ տարածելու խնդիր ունի: Սակայն այս ցուցանիշը խոսում է նաեւ այն մասին, որ փաստաթղթերի հետ աշխատելու պրակտիկան դեռեւս ձեւավորված չէ մեր լրագրության մեջ: Նույնիսկ վերլուծական հոդվածներ եւ հետաքննություններ պատրաստող լրագրողներից շատերը երբեւէ չեն օգտվել արխիվային փաստաթղթերից:

Այսօր արդեն Ինտերնետը լայնորեն կիրառվում է եւ՛ լրագրողների, եւ՛ պաշտոնյաների կողմից: 16 նախարարություններից 15-ը ունեն պաշտոնական կայքեր (բացառությամբ Քաղաքաշինության նախարարության, իսկ Տարածքային կառավարման նախարարության ինտերնետային կայքը սույն ուսումնասիրությունը կատարելու ժամանակ չի բացվում եւ չի գործում): Լրագրողներն առաջնահերթ օգտվում են պաշտոնական կայքերից, չնայած ոչ բոլոր գերատեսչական կայքերն են, որ կարող են օգտակար եւ հիմնավոր տեղեկատվություն տալ: Դրանցից շատերը պարունակում են այնպիսի տեղեկատվություն, որը գովազդում է տվյալ գերատեսչությունը եւ չի պարունակում հանրային կարեւորության տեղեկատվություն: Միեւնույն ժամանակ գերատեսչությունների կայքերը պարբերաբար չեն թարմացվում, հետեւաբար եւ չեն ծառայում իրենց հիմնական նպատակին: Օրինակ, Տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայքում նախարարի ոչ մի որոշում չկա: Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական կայքում մարզպետի վերջին որոշումը հրապարակվել է 2006թ. հոկտեմբերին, իսկ Արմավիրի մարզպետարանի կայքում մարզպետի ոչ մի որոշում չի տեղադրված: Որոշ գերատեսչությունների պաշտոնական կայքերն ընդհանրապես չեն գործում: Կայքերում նշված էլեկտրոնային փոստի հասցեները, որոնց միջոցով մարդիկ կարող են դիմումներ ու-

ղարկել եւ արագ պատասխան ստանալ, նույնպես չեն գործում: Օրինակ, ուսումնասիրությունն իրականացնող աշխատանքային խումբը տեղեկություն ստանալու հարցում ուղարկեց Կառավարության պաշտոնական կայքին՝ www.gov.am, պարզելու համար, թե նրանք կատարում են կայքում տեղադրված իրենց խոստումը, թե «բոլոր հարցումներին պատասխան է տրվում»: Պատասխան չստացվեց, անգամ մերժման տեսքով: Բայց կան նաեւ լավ օրինակներ: Օրինակ, ՀՀ Նախագահի, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կամ ՀՀ Գլխավոր դատախազության պաշտոնական կայքերը պարբերաբար թարմացվում են, եւ լրագրողների համար բավականին օգտակար են թե՛ նորությունների, եւ թե՛ կայացված որոշումներին ծանոթանալու առումով:

ԲԱԺԻՆ Ե

Պաշտոնական տեղեկատվություն ստանալու՝ լրագրողների փորձը

Լրագրողները գնահատել են ոլորտները ըստ տեղեկատվության մատչելիության գործոնի: Նրանք հնարավորություն են ունեցել ընտրել մեկից ավելի ոլորտ: Ներկայացնենք հարցման ամբողջական պատկերը.

Ո՞ր բնագավառում/ներում է հեշտ ստանալ տեղեկատվություն:

- մշակույթ 62 հոգի կամ 59%
- վիճակագրություն 53 հոգի կամ 50%
- կրթություն 52 հոգի կամ 50%
- սոցիալական հիմնախնդիրներ 50 հոգի կամ 48%
- սպորտ 47 հոգի կամ 45%
- արտաքին գործեր 42 հոգի կամ 40%
- բնապահպանություն 33 հոգի կամ 31%
- առողջապահություն 27 հոգի կամ 26%
- տնտեսություն 26 հոգի կամ 25%

Բանկային եւ պաշտպանության ոլորտներից 10 լրագրող է կարողանում հեշտությամբ տեղեկություն ստանալ: Իսկ դատական եւ ներքին գործերի բնագավառներում առանց խոչընդոտների տեղեկություններ է ստանում 5 լրագրող: Նշենք, որ այս ոլորտները ընտրել են այս թեմաներով գրող լրագրողները:

Չնայած մշակութային, կրթական եւ սպորտի բնագավառները բավականին բարձր ցուցանիշներ են հավաքել, այնուհանդերձ հարկ է նշել, որ դրանք ընտրել են հիմնականում այն լրագրողները, ովքեր լուսաբանում են բոլորովին այլ ոլորտներ: Օրինակ, քաղաքական եւ տնտեսական ոլորտներով գրող լրագրողներից շատերը:

Օրաթերթի 1 լրագրող է միայն պատասխանել, որ փակ ոլորտ գոյություն չունի: Բոլոր տեղերում էլ հավասարապես եւ՛ հեշտ է, եւ՛ դժվար տեղեկություն ստանալը, «նայած՝ ինչ ինֆորմացիա ես ուզում եւ ումից»:

Ըստ հարցված լրագրողների՝ տեղեկություններ ստանալն առավել դժվար է ոստիկանության եւ պաշտպանության բնագավառնե-

ից: Այս կարծիքն են հայտնել հարցված լրագրողների համապատասխանաբար 65 եւ 52 տոկոսը: Այսպես, պատասխանների ամբողջական պատկերը հետեւյալն է.

Ո՞ր բնագավառում/ներում է դժվար ստանալ տեղեկատվություն:

- ոստիկանություն 68 հոգի կամ 65%
- ռազմական/ պաշտպանություն 55 հոգի կամ 52%
- դատական 51 հոգի կամ 49%
- բանկային համակարգ/ֆինանսներ 47 հոգի կամ 45%
- առողջապահություն 39 հոգի կամ 37%
- արտաքին գործեր 23 հոգի կամ 22%
- տնտեսություն 20 հոգի կամ 19%
- սոցիալական հիմնախնդիրներ 17 հոգի կամ 16%
- բնապահպանություն 15 հոգի կամ 14%

Մշակույթի, կրթության եւ սպորտի ոլորտները ստացել են հավասար ձայներ. ընդամենը 2-ական (2%) լրագրող է կարծում, որ այս ոլորտներից դժվար է տեղեկություններ ստանալը:

Այլ պատասխանների մեջ 4 լրագրող նշել է, որ երբեւէ որեւէ խնդիր չի ունեցել այս բնագավառներից որեւէ տեղեկատվություն ստանալու գործում: Նրանցից 2-ը ներկայացնում են Հանրային հեռուստաընկերությունը, 2-ը՝ երեւանյան օրաթերթեր:

Գրեթե նույն պատկերն է ստացվել նաեւ պետական մարմիններից տեղեկություններ ստանալու մատչելիության մակարդակը գնահատելիս: Լրագրողներն իրենց կարծիքն են հայտնել ամենաթափանցիկ եւ հրապարակային պետական մարմնի մասին, որն ունի տեղեկատվություն տրամադրելու առավել արդյունավետ ընթացակարգեր, ինչպես նաեւ լավ տեխնիկական պայմաններ, նորմալ վիճակում գտնվող փաստաթղթերի արխիվ եւ կրթված անձնակազմ: Եւ ի վերջո, որտեղից առավել հեշտ եւ արագ է տեղեկատվություն ստացվում:

Եթե մարզային լրագրողների կարծիքով նշված չափանիշներին համապատասխանում է իրենց մարզի մարզպետարանը կամ քաղաքապետարանը, ապա երեւանյան լրագրողների համար հիմնականում այդպիսի կառույց նախարարություններն են: Առանց քաշքշուկների եւ արագորեն ինֆորմացիա տրամադրող գերատեսչությունների ցանկում են հայտնվել նաեւ Կառավարությունը եւ Ազգային Ժողովը:

Ո՞ր մարմիններից է հեշտ ստանալ տեղեկատվություն:

- նախարարություն 67 հոգի կամ 64%
- հասարակական կազմակերպություն 62 հոգի կամ 59%
- բարեգործական կազմակերպություն 45 հոգի կամ 43%
- կառավարություն 44 հոգի կամ 42%
- կուսակցություն 42 հոգի կամ 40%
- Ազգային ժողով 40 հոգի կամ 38%
- մարզպետարան 35 հոգի կամ 33%
- ԿԸՀ/Ընտրական հանձնաժողովներ 35 հոգի կամ 33%
- հանրային նշանակության կազմակերպություն 30 հոգի կամ 39%
- քաղաքապետարան 27 հոգի կամ 26%
- թաղապետարան 24 հոգի կամ 23%
- համատիրություն 18 հոգի կամ 17%
- առեւտրային կազմակերպություն 12 հոգի կամ 11%
- կադաստր 10 հոգի կամ 10%

Ինչպես տեսնում ենք՝ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք թվում է, թե առավել մատչելի եւ հրապարակային պետք է գործեին հանրության համար, ըստ լրագրողների՝ առավել փակ կառույցներից են: Լրագրողների ընդամենը 23 տոկոսն է կարծում, որ թաղապետարանից հեշտ է տեղեկատվություն ստանալը, եւ 17 տոկոսն էլ կարծում է, թե համատիրությունից հեշտ է տեղեկություն ստանալը: Հարկային եւ մաքսային ծառայությունները, դատարանները տեղեկություններ ստանալու առումով բաց չեն համարվում: Հարցվածներից 9-ը կամ 8.5%-ն է համարում, որ այս մարմիններից հեշտ է տեղեկատվություն ձեռք բերելը:

Խիստ բազմազան ու ընդարձակ է փակ աշխատող եւ անհրաժեշտ ընթացակարգեր չունեցող կառույցների ընտրությունը: Միեւնույն ցանկից լրագրողներն առանձնացրել են տեղեկությունների առումով դժվարամատչելի գերատեսչությունները:

Ո՞ր մարմիններից է դժվար ստանալ տեղեկատվություն:

- հարկային 58 հոգի կամ 55%
- մաքսային 56 հոգի կամ 53%
- կադաստր 55 հոգի կամ 52%
- դատարան 51 հոգի կամ 49%
- թաղապետարան 42 հոգի կամ 40%
- քաղաքապետարան 35 հոգի կամ 33%

- մարզպետարան 30 հոգի կամ 29%
- համատիրություն 28 հոգի կամ 27%
- նախարարություն 22 հոգի կամ 21%
- առեւտրային կազմակերպություն 21 հոգի կամ 20%
- կառավարություն 19 հոգի կամ 18%
- ԿԸՀ/Ընտրական հանձնաժողովներ 17 հոգի կամ 16%
- պետական հիմնադրամ 12 հոգի կամ 11%

Ազգային ժողովը, կուսակցությունները, հանրային նշանակության եւ բարեգործական կազմակերպությունները նշել է ընդամենը 9 լրագրող կամ 9%: Միայն մարզային մեկ լրագրող է, որ ընտրել է հասարակական կազմակերպությունը՝ նշելով, որ բազմիցս դիմել է Երեւանում գործող մի ՀԿ-ի՝ նրան ֆինանսական գործունեության մասին տեղեկություն ստանալու համար, սակայն երբեւէ պատասխան չի ստացել:

9 լրագրող այս ցանկին ավելացրել է նաեւ ոստիկանությունը, 6-ը՝ դատախազությունը: 4 լրագրող այն կարծիքն է հայտնել, որ բոլոր գերատեսչությունները թաքցնելու բան ունեն, եւ միշտ էլ դժվար է պետական պաշտոնյայից ստանալ այն տեղեկությունը, որը կարող է բացահայտել պաշտոնական չարաշահումները: Որպես օրինակ նրանցից մեկը նշել է բնապահպանական խնդիրներին վերաբերող տեղեկությունները:

Լրագրողներին խնդրել էինք նաեւ գրել, իրենց կարծիքով, ամենաբաց եւ ամենափակ գործող կառույցների անունները: Բաց լինելը նրանցից շատերը հիմնավորել են այն հանգամանքով, որ համապատասխան գերատեսչությունների լրատվության պատասխանատուները լրագրողների հետ աշխատելու հստակ եւ համակարգված ընթացակարգեր ունեն: Եվ կամ պաշտոնյաները մշտապես պատրաստ են ինֆորմացիա տրամադրել: Ցանցային լրատվամիջոցներից մեկի լրագրողը նշել է Արտաքին գործերի նախարարությունը եւ ավելացրել, որ նախարարությունից թե էլեկտրոնային փոստով օրական 5-10 հաղորդագրություն-լուր են ստանում, թե նրանց հեռախոսազանգերին եւ կամ ցանկացած ինֆորմացիա ստանալու հարցմանը հնարավորինս սեղմ ժամկետում պատասխանում են: Որպես բաց գործող պետական կառույց Արտաքին գործերի նախարարությունը նշել է 48 լրագրող կամ 47%, նրանցից շատերը լրատվական գործակալությունների, ցանցային եւ օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչներն են:

Այսպես, ամենաբաց գերատեսչությունը, լրագրողների կարծիքով, Արտաքին գործերի նախարարությունն է՝ 47 %, այնուհետեւ.

- Վիճակագրական ծառայությունը 38%
- Ազգային ժողովը 36%
- Կառավարությունը 33%
- Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը 30%
- Մշակույթի նախարարությունը 24%
- Կրթության եւ գիտության նախարարությունը 15%

27% նշել է, որ դժվարանում է առանձնացնել որեւէ գերատեսչություն, որ միանշանակ բաց եւ թափանցիկ գործի: Իսկ 3 լրագրող կամ 2.8% գրել է, որ բոլոր պետական մարմիններն էլ բաց են աշխատում:

Փակ գործող գերատեսչություններից լրագրողներն ամենից հաճախ նշել են Ազգային անվտանգության ծառայությունը, Պաշտպանության նախարարությունը եւ ոստիկանությունը: Հատկանշական է, որ այս երեք գերատեսչությունները նշած լրագրողների մեծ մասն իրենց բացատրության մեջ ավելացրել են, որ «այս մարմինների բնույթն է այդպիսին, եւ շատ հարցերում պիտի փակ էլ լինեն»:

Այսպես լրագրողների կարծիքով ամենափակ մարմիններն են.

- Ազգային անվտանգության ծառայություն 40 հոգի 38%
- Ոստիկանություն 38 հոգի 36%
- Պաշտպանության նախարարություն 38 հոգի 36%
- դատախազություն 28 հոգի 27%
- քաղաքապետարան 27 հոգի 26%
- Առողջապահության նախարարություն 22 հոգի 21%
- Հարկային ծառայություն 22 հոգի 21%
- Մաքսային 20 հոգի 19%
- Անձնագրերի եւ վիզաների վարչություն 16 հոգի 15%
- Նախագահական ապարատ 15 հոգի 14%
- Դատարաններ 12 հոգի 11%
- Կապի եւ տրանսպորտի նախարարություն 10 հոգի 10%

Բոլոր պետական մարմինները փակ եւ ոչ հրապարակային գործող են համարում հարցվածներից 14-ը կամ 13%-ը: Հիմնական թերությունը նշվել է այն, որ այս մարմիններում չեն տիրապետում անհրաժեշտ համակարգված տեղեկատվության: Նշված հիմնական թերություններն են. մամլո պատասխանատուի կամ քարտուղարի ոչ պրոֆեսիոնալ աշխատանքը: Լրագրողները դժգոհում են, որ այս մարմինները մամլո պատասխանատուների պատճառով տեղեկութ-

յուն հայտնում են ամենավատը, ամենակցկտուրը եւ ամենաուշը: Որոշ կառույցներում ինֆորմացիան համակարգված չէ կամ ընդհանրապես բացակայում է:

Լրագրողները նաեւ նշում են, որ տվյալ պետական մարմնի բաց կամ փակ լինելը կախված է նաեւ լրագրողի պրոֆեսիոնալիզմից, փորձառությունից եւ ունեցած անձնական կապերից: Հետաքննող լրագրողներից մեկի կարծիքով, ընդհանրապես չկա բաց եւ փակ գերատեսչություն, բոլորն էլ փակում են տեղեկատվությունը, եթե այն վերաբերում է իրենց գերատեսչությունում տեղի ունեցած ապօրինություններին եւ չարաշահումներին:

Հարցմանը մասնակցած 105 լրագրողներից 82-ը (78%) նշել է, որ ինֆորմացիա տրամադրելիս պաշտոնյաները սովորաբար անձը հաստատող փաստաթուղթ չեն պահանջում լրագրողներից: Հեռեւստատեսության շատ լրագրողներ դա բացատրում են նրանով, որ «տեսախցիկների առկայությունը եւ խոսափողին նշված լոգոն արդեն իսկ փաստաթուղթ են»: Մարզային եւ օտարերկրյա լրագրողների մեծ մասի հավաստմամբ՝ իրենց արդեն բոլոր գերատեսչություններում ճանաչում են: Երեւանյան թերթի մեկ լրագրող էլ պատասխանել է, որ իր լուսաբանած մշակութային եւ կրթական ոլորտներում պաշտոնյաներն իրեն ճանաչում են, վստահում են եւ որոշ չափով նաեւ՝ վախենում իրենից:

17 լրագրողից փաստաթուղթ պահանջում են բոլոր պետական կառույցներում: Իսկ 7 լրագրող պատասխանել է, որ որոշ կառույցներում պահանջում են, որոշներում՝ ոչ: Օրինակները բազմաթիվ են. «Լրագրողի վկայական պահանջում են Նախագահի այցի ընթացքում հարցազրույցին մասնակցելու կամ վարչապետի այցի ընթացքում նկարահանումներ կատարելու համար: Իսկ ընտրությունների ընթացքում տարածքային եւ տեղամասային հանձնաժողովները մինչ նկարահանումը պարտադիր պահանջում են»: Լրատվական գործակալության մեկ լրագրող է միայն պատասխանել, որ առանց սպասելու ինքն է ներկայացնում փաստաթուղթը եւ համարում է, որ դա լրագրողական էթիկայի կարեւորագույն պահանջներից է:

Ամփոփելով արդյունքները՝ նշենք, որ փակ կամ բաց գերատեսչությունների վերաբերյալ հարցումների պատասխանները խիստ հակասական են: Ինչպես վերը նշվեց, լրագրողներից շատերը բաց կամ փակ ոլորտ/գերատեսչություն են ընտրել այն մարմնին, որի գործունեությունը երբեւէ չեն լուսաբանել: Սա խոսում է այն մասին,

որ նույնիսկ լրագրողների մոտ կան արդեն ձեւավորված ստերեոտիպեր, եւ օրինակ փակ գերատեսչության մասին հարցնելիս, առաջին հերթին, մարդկանց մտքին գալիս են ոստիկանությունը կամ ուժային կառույցները: Բաց եւ հրապարակային գործող գերատեսչությունների մասին հարցնելիս՝ առաջին հերթին նշում են մշակույթի կամ կրթության ոլորտը եւ կամ հասարակական կազմակերպությունները, սակայն երբ խնդրում ենք օրինակներ բերել, շատ հաճախ պարզվում է, որ նրանք երբեւէ չեն դիմել այդ մարմիններին, պարզապես լսել են իրենց գործընկերներից կամ ծանոթներից: Իրական պատկերը պարզելու համար է, որ բաց եւ փակ գերատեսչությունների/բնագավառների մասին մի քանի հարցումներ են տրվել լրագրողներին:

Կարծրատիպերի առկայության մասին է փաստում նաեւ այն հանգամանքը, որ թեեւ լրագրողների մի մասը որպես ամենափակ կառույց նշել է դատարանները կամ հարկային ծառայությունը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձն այլ բան է ասում: Այսպես, 2007թ.-ի Խորհրդարանական ընտրությունների ժամանակ Կենտրոնը հարցումներ էր ուղարկել ՀՀ բոլոր առաջին ատյանի դատարաններին եւ խնդրել տրամադրել ընտրությունների հետ կապված դատական որոշումների պատճենները: Այս հարցումների արդյունքում Կենտրոնը ստացել է ՀՀ բոլոր դատարաններում 2007թ.-ի մայիսի 12-ին կայացած ԱԺ ընտրությունների հետ կապված դատական բոլոր որոշումների պատճենները՝ մոտ 200 էջ: Ընդ որում, դատարանները հիմնականում պահպանել էին տեղեկություններ տրամադրելու օրենքով նախատեսված 5-օրյա ժամկետը, ինչը շատ հաճախ խախտվում է բազմաթիվ բաց համարվող պետական մարմինների կողմից:

Մեկ այլ օրինակ եւս. 2006 եւ 2007 թվականների ընթացքում ԻԱ Կենտրոնը դիմել էր Հարկային պետական ծառայությանը՝ խնդրելով տրամադրել բոլոր նախարարների գույքի եւ եկամուտների հայտարարագրերի պատճենները: Կրկին օրենքով սահմանված ժամկետներում Կենտրոնին տրամադրվել է ամբողջական գրավոր պատասխան:

Այնուհանդերձ, հարցումների արդյունքներով 105 լրագրողների 46%-ի կարծիքով ամենաբաց եւ հրապարակային պետական մարմին է Արտաքին գործերի նախարարությունը, որը տեղեկություններ տրամադրելու հստակ ընթացակարգեր եւ արդյունավետ աշխատաոճ ունի: Այս կարծիքն են հայտնել նաեւ հարցմանը մասնակից օտարերկրյա լրատվամիջոցների բոլոր 5 լրագրողները: Որպես

փակ, տեղեկատվության առումով դժվարամատչելի եւ լրագրողների հետ աշխատելու կամայական կարգեր ունեցող գերատեսչություններից գրեթե հավասար ցուցանիշներով առաջին եռյակում են Ազգային անվտանգության ծառայությունը (38%), Ոստիկանությունը եւ Պաշտպանության նախարարությունը (հավասարապես՝ 36%):

ԲԱԺԻՆ 2

Տեղեկություն ստանալու հարցում

Հարցված 105 լրագրողների 48 տոկոսը (50 հոգի) տեղեկություն մշտապես նախընտրում են ստանալ առավելապես բանավոր, քան գրավոր: Դա նրանք բացատրում են այն բանով, որ ժամանակի խնդիր ունեն, քանի որ լուր են պատրաստում, եւ պահանջվող տեղեկությունը նրանց անհրաժեշտ է անմիջապես կամ գոնե մի քանի ժամվա ընթացքում: Միայն վերլուծական նյութերի կամ հետաքննությունների դեպքում է, որ լրագրողը կարող է սպասել օրենքով սահմանված 5 օրյա ժամկետին:

Պաշտոնյաներին գրավոր հարցումներ լրագրողների մեծամասնությունը հազվադեպ է ուղղում՝ 69 հոգի 65.7 տոկոսը: Գրավոր երբեք չի դիմել 25 լրագրող կամ 23.8 տոկոսը: Նրանցից շատերը լրատվական գործակալությունների եւ ռադիոյի լրագրողներն են: Այսպես հարցումների ձեւերի ընդհանուր պատկերը հետեւյալն է.

Ինչպե՞ս եք դիմել Ձեզ անհրաժեշտ տեղեկությունը ստանալու համար

Բանավոր	միշտ	50 հոգի, 48%	***Գրավոր***	միշտ	1 հոգի 0.9%
	հաճախ	33 հոգի, 31%		հաճախ	10 հոգի 10%
	հազվադեպ	0		հազվադեպ	69 հոգի 66%
	երբեք	0		երբեք	25 հոգի 24%

Նույնիսկ եթե լրագրողները գրավոր են դիմում, ապա նրանց մեծ մասը (59%) պարզապես շարադրում է հարցերը եւ օրենքներին հղում չի անում: Այս հանգամանքը թերթերի լրագրողներից մի քանիսը բացատրում են նրանով, որ պաշտոնյաները վիրավորական են համարում, երբ հարցման մեջ օրենքի դրույթներ են տեսնում եւ համարում են, թե լրագրողները ցանկանում են իրենց օրենք սովորեցնել:

Գրավոր հարցումներում օրենքներին հղում են անում հարցված լրագրողներից 35-ը կամ 33.3%: Նրանցից միաժամանակ եւ սահմանադրական դրույթներին, եւ ՏԱ մասին օրենքին են հղում անում 10-ը, միայն Սահմանադրությանը՝ 5-ը, մնացած 20 լրագրող նշում է միայն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի դրույթները: Պետք է նշել, որ մարզային լրագրողներն առավել հաճախ են

իրենց հարցերը գրավոր ներկայացնում, քան երեւանյան լրագրողները: Ինչպես նրանք են ասում, մարզային պաշտոնյաների մեծ մասը հաճախ մերժում է տեղեկություններ տրամադրել՝ պատճառաբանելով, թե իրենք այդ մասին տեղյակ չեն եւ խորհուրդ են տալիս դիմել նախարարություն: Լրագրողներն էլ գրավոր են դիմում մայրաքաղաքի վերադաս պաշտոնյաներին:

Ցանցային լրատվամիջոցները գրավոր հարցման ձեւերից նշել են նաեւ էլեկտրոնային նամակները, որոնց միջոցով էլ նրանք հաճախ դիմում են եւ ստանում պատասխաններ: Օտարերկրյա լրատվամիջոցների լրագրողները նախընտրում են բանավոր հարցումները: Հետաքննողներ լրագրողներից մեկը չնայած կարեւորեց գրավոր հարցումներով տեղեկություններ ստանալու ճանապարհը, այն առումով, որ այդ կերպ նա փաստաթղթեր է ստանում, սակայն նշեց նաեւ, որ շատ հաճախ բանավոր զրույցների ժամանակ է ձեռք բերում կարեւոր տեղեկությունները: Մարզային հեռուստաընկերության լրագրողն էլ, ասում է, որ բանավոր զրույցի ժամանակ «պատասխաններից անմիջապես նոր հարցեր են ծագում, որոնց պատասխանները կարելի է անմիջապես ստանալ, ինչը հնարավորությունը չի տալիս գրավոր հարցումը»:

Չնայած վերը նշված հարցին, թե ծանո՞թ են արդյոք տեղեկատվության ստացման իրավական հիմքերին, լրագրողների մեծամասնությունը՝ 105 լրագրողներից 98-ը կամ 93%, տվել է դրական պատասխան, այնուհանդերձ, լրագրողները գործնականում չեն օգտագործում օրենքի դրույթները:

Հարցումների պատասխանների ստացման ժամկետների դեպքում հեռուստատեսային լրագրողների մեծամասնությունը նշել է, որ անմիջապես է պատասխան ստացել: Ընդհանուր առմամբ անմիջապես պատասխան է ստանում լրագրողների 52 տոկոսը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանցից շատերը բանավոր են դիմում եւ շատերը հեռուստատեսության կամ ռադիոյի լրագրողներ են: Լուրեր հաղորդելու հանգամանքը եւս մեծ դեր է կատարում, քանի որ լրագրողները տեղեկությունները արագ տարածելու օրապահանջ խնդիր ունեն, հետեւապես նրանք չեն կարող սպասել մի քանի օր:

Օրենքով սահմանված ժամկետներում՝ մինչեւ 5 օր, ինֆորմացիան ստացել է լրագրողների 27 տոկոսը: 1-ից 3 ամիս նշել է լրագրողների 16 տոկոսը: Անհրաժեշտ տեղեկություններն ընդհանրապես չեն ստացել հարցված լրագրողների 10 տոկոսը:

Տեղեկությունների տրամադրման ձեւերն էլ գրեթե նույն ցուցանիշներն ունեն. բանավոր պատասխանները գերակշիռ մասն են կազմում: Այսպես.

Ինչպե՞ս են Ձեզ տրամադրել Ձեր պահանջած տեղեկատվությունը

Բանավոր	միշտ	45 հոգի, 42.8%	***Գրավոր***	միշտ	5 հոգի,4.7%
	հաճախ	49 հոգի, 46.6%		հաճախ	29 հոգի, 27.6%
	հազվադեպ	4 հոգի, 3.8%		հազվադեպ	59 հոգի,56.1%
	երբեք	1 հոգի, 0.9%		երբեք	22 հոգի, 20.9%

Էլեկտրոնային փոստով		***Տպագրված կամ պատճենահանված***		
միշտ	10 հոգի, 9.5%		միշտ	4 հոգի, 4%
հաճախ	38 հոգի, 36%		հաճախ	26 հոգի, 25%
հազվադեպ	41 հոգի, 39%		հազվադեպ	5 հոգի, 43%
երբեք	8 հոգի, 8%		երբեք	15 հոգի, 14%

Ակնհայտ է, որ այս հարցի ցուցանիշները գրեթե նույն են նախորդ հարցի պատասխանների հետ. ինչպես դիմում են, այնպես էլ ստանում են: Սա նաեւ օրենքի պահանջն է. գրավոր հարցման պատասխանը տրվում է գրավոր, բանավորինը՝ բանավոր: Սակայն, օրինակ թերթերի լրագրողներից մեկը նշել է, որ հեռախոսազանգով իր հարցմանը Կապի եւ տրանսպորտի նախարարության լրատվության բաժնի պետը պահանջել է գրավոր շարադրել հարցերը: Ինչպես նշում են ցանցային լրագրողներից մի քանիսը, էլեկտրոնային փոստով ստացվող տեղեկությունները հիմնականում մամլո հաղորդագրություններ են:

Լրագրողները փաստաթղթեր կամ որոշումներ ստանում են տպագրված կամ պատճենահանված: Սակայն մեծամասնությունը ավելացրել է, որ ստացված տեղեկությունները չեն գերազանցել 10 էջը: Ամենից հաճախ նշված է 1-ից 5 էջ պատասխանը: Վանաձորի լրագրողներից մեկը միայն նշել է, որ ստացել է 273 էջից բաղկացած քաղաքապետի որոշումների պատճեներ:

Թերեւս այս հանգամանքով է պայմանավորված նաեւ հաջորդ հարցի ցուցանիշը: Լրագրողների գերակշիռ մասը՝ 98 հոգի կամ 93.3% ստացված տեղեկության համար երբեւէ չի վճարել: Տեղեկատվության մասին ՀՀ օրենքը սահմանում է, որ եթե պահանջվող տեղեկությունները գերազանցում են 10 էջը, ապա տեղեկություն տրամադրողը կարող է գումար պահանջել 11-րդ էջից սկսած: 3 հոգի նշել է, որ վճարել է պետական տուրք վիճակագրական տվյալներ կամ հասցեների բյուրոյից տեղեկանք ստանալու համար: Իսկ

Արմավիրի հեռուստալրագրողներից մեկը վճարել է 8900 դրամ քաղաքապետարանից որոշումների պատճեներ ստանալու համար: «Մեկ էջի համար քաղաքապետարանը սահմանել էր 50 դրամ: Ընդհանուր առմամբ որոշումների պատճեները կազմում էին 178 էջ»,- նշում է նա:

Այսպես, տեղեկություններ ստանալիս 105 լրագրողներից 50-ը կամ 48% մշտապես նախընտրում է հարցման բանավոր ձեւը: Հաճախ են պաշտոնյաներին բանավոր դիմում լրագրողների 31%: Այս ցուցանիշը հավելում է նախորդ բաժնում նշված լրագրողների այն համոզմունքին, թե տեղեկությունների ձեռք բերման ամենաարագ եւ արդյունավետ միջոցը պաշտոնյաների հետ անձնական շփումներն են (105 հոգուց 75-ը այսպես է կարծում): Լրագրողները պաշտոնյաներին տեղեկատվության գրավոր հարցումներ հազվադեպ են ուղարկում՝ 69 հոգի 66%: Հատկանշական է նաեւ, որ 105 լրագրողից 25-ը տեղեկատվությունը գրավոր ներկայացնելու անհրաժեշտություն երբեք չի ունեցել:

Գրավոր հարցումներից խուսափելու հիմնական պատճառն այն է, որ գրավոր հարցման պատասխանը հիմնականում տրվում է մի քանի օրվա ընթացքում (թեեւ օրենքը սահմանում է մինչեւ 5 օրյա ժամկետ, պաշտոնյաները հիմնականում խախտում են այս ժամկետը: Փոստային առաքումը եւս լրացուցիչ ժամանակ է պահանջում): Իսկ լրագրողներին պահանջվող տեղեկատվությունը անհրաժեշտ է սեղմ ժամկետներում: Միայն հետաքննության վրա աշխատող լրագրողը կարող է այդքան ժամանակ տրամադրել տեղեկատվությունը գրավոր ստանալու համար: Իսկ օրաթերթերում աշխատող լրագրողների համար սա գրեթե անընդունելի տարբերակ է:

Նշենք, որ ոչ միայն լրագրողներն են նախընտրում հարցման բանավոր ձեւը, այլեւ պաշտոնյաներն էլ մեծիմասամբ բանավոր են պատասխանում: Լրագրողներից 49-ը հաճախ է բանավոր ստանում իրեն անհրաժեշտ տեղեկությունները, իսկ 45-ը՝ մշտապես: Հարցմանը մասնակից լրագրողների գերակշիռ մասը (98 հոգի կամ 93%) երբեւէ չի վճարել տեղեկատվության համար: Սա թերեւս պայմանավորված է այն հանգամանքով, որ գրավոր ստացված տեղեկությունները հիմնականում չեն գերազանցել 10 էջի սահմանը, որը գերազանցելու դեպքում է միայն ՏԱ մասին օրենքը տեղեկատվություն տրամադրողին իրավունք տալիս գումար պահանջել:

ԲԱԺԻՆ Է

Տեղեկատվության մերժում

Հարցմանը մասնակցած 105 լրագրողներից 75-ը կամ 71% աշխատանքային պրակտիկայում հազվադեպ է մերժում ստացել, իսկ 16 հոգի կամ 15% տեղեկություն պահանջելիս երբեք չի հանդիպել մերժման: Միայն 14 հոգի կամ 13% է նշել, որ հաճախ են պաշտոնյաները մերժել, իսկ մշտապես ոչ ոք չի մերժվել: Լրագրողները սա բացատրում են նրանով, որ հետեւողական են իրենց աշխատանքում եւ փորձում են ամեն կերպ ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկությունը: Հաճախ մերժվողների թվում են ընդդիմադիր օրաթերթերի եւ մարզային լրագրողները: Հեռուստատեսային շատ լրագրողներ հազվադեպ են մերժման հանդիպել, իսկ հարցմանը մասնակից օտարերկրյա լրատվամիջոցների բոլոր 5 լրագրողներին երբեք չեն մերժել տեղեկություն տրամադրել:

Ինչպես ցույց են տալիս Զ Բաժնի արդյունքները, քանի որ լրագրողների ճնշող մեծամասնությունը գերադասում է դիմել բանավոր, ապա տեղեկատվություն ստանալու մերժումներն էլ հիմնականում լինում են բանավոր: Ընդ որում, լրագրողներն ավելացնում են, որ նույնիսկ իրենց գրավոր հարցումներին պաշտոնյաները բանավոր են մերժում: Այս կերպ պաշտոնյաները կարողանում են իրենց ապահովագրել օրենքի առաջ պատասխանատվությունից:

Հատկանշական է, որ 2004 թվականին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից անցկացված հարցման ժամանակ լրագրողների 98% նշել էր, որ իրենց պրակտիկայում հաճախ են հանդիպել անօրինական մերժումների: Նշենք, որ այդ ժամանակ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը նոր էր ուժի մեջ մտել (ընդունվել է 2003թ.-ին), եւ թե լրագրողները, թե պաշտոնյաները գործնականում ծանոթ չէին օրենքի դրույթներին: Այսօր պատկերը զգալիորեն փոխվել է:

Այս ուսումնասիրության արդյունքում, փաստորեն, լրագրողների միայն 13%-ն է հաճախ հանդիպել տեղեկատվության անօրինական մերժումների: Կարելի է եզրակացնել, որ օրենքի կիրառումն արդեն իսկ զգալի փոփոխություններ է առաջացրել տեղեկատվության տրամադրման գործընթացում: Իրենք լրագրողներն էլ են դա փաստում: Լոռու մարզի լրագրողներից մեկը վկայակոչել է ՏԱ մասին օրենքը. «օրենքի գոյությունն արդեն իսկ շատ դեպքերում մեզ

ապահովում է անօրինական մերժումներից: Մեր պրակտիկայում, ՏԱ մասին օրենքով առաջնորդվելով, արդեն իսկ վիճարկել ենք քաղաքապետարանի անօրինական մերժումը դատարանում եւ հոգուտ մեզ որոշում ստացել: Դրանից հետո թե քաղաքապետարանում, թե մյուս պաշտոնյաները մշտապես տրամադրում եմ մեզ անհրաժեշտ ինֆորմացիան»: Հեռուստատեսային լրագրողներից մեկը կարծիք է հայտնել, որ պաշտոնյաներից շատերն են արդեն ծանոթ ՏԱ մասին օրենքին: Նա օրինակ է բերել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հասարակայնության հետ կապերի վարչության պետի պատրաստակամ եւ գրագետ վերաբերմունքը եւ նշել, որ այստեղ նրան մշտապես տրամադրում են հստակ եւ ամբողջական տեղեկատվություն:

Մերժման դեպքերի նվազումը լրագրողները բացատրում են նաեւ այն հանգամանքով, որ լրագրողներն առավել հաճախ են սկսել դիմել պաշտոնյաներին: Իրավական թեմաներով գրող մի լրագրող, օրինակ, նշում է, որ 2-3 տարի առաջ դատարաններում հատուկենտ լրագրողներ կային, այն էլ մեծ աղմուկ հանած դատաքննությունների ժամանակ միայն: Այսօր լրագրողները սկսել են ավելի հաճախ ներկա գտնվել դատական նիստերին, գրել իրավական հարցերի մասին, եւ այս հանգամանքով պայմանավորված դատավորները սովորել են աշխատել նաեւ լրագրողների հետ:

Լրագրողները նշել են տեղեկատվության տրամադրման անօրինական մերժումների օրինակներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Էլեկտրոնային թերթի լրագրողներից մեկը պատմում է, որ Արմավիրի մարզպետին ուղղած իր գրավոր հարցումին ի պատասխան, մարզպետը մերժել է տրամադրել տեղեկատվություն՝ պահանջելով հիմնավորել հարցման նպատակը: Եվ կամ, Առողջապահության նախարարության պաշտոնյան հրաժարվել է տեղեկություն տալ թերթերից մեկի լրագրողին՝ ասելով. «Ի՞նչ գիտեմ, ինչպես եք օգտագործելու այդ տեղեկությունը»: Անօրինական մերժման մեկ այլ դեպք է պատմում Վանաձորի լրագրողներից մեկը: Նա դիմել է Լոռու մազպետարանի կրթության վարչություն՝ տեղեկություն ստանալու քաղաքի երկու դպրոցների միավորման մասին: Վարչության պաշտոնյաներից մեկը նրան բարեկամաբար խորհուրդ է տվել գրել այլ թեմաների մասին: Լրագրողները, հատկապես ընդդիմադիր լրատվամիջոցների ներկայացուցիչները, նշում են, որ լինում են դեպքեր, երբ պետական այս կամ այն մարմինը մերժում է տեղեկություն տրամադրել կոնկրետ թերթի հանդեպ կամ կոնկրետ լրագ-

ղողի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի պատճառով, այսինքն խտրականություն են դրսեւորում լրագրողների հանդեպ:

Պաշտոնյաների մերժման հիմքերը խիստ բազմազան են: Հարցված լրագրողներից 57-ը կամ 54% նշել է, որ պաշտոնյաները հիմնավորում են, իրենց մերժումը, սակայն 42-ի համոզմամբ, այդ հիմնավորումները շատ հաճախ օրենքից չեն բխում: Օրինակ, լրագրողներից մեկը նշում է, որ նոտարի կոնկրետ գործողության օրինականության մասին գրավոր հարցմանը Արդարադատության նախարարության նոտարիատի բաժնի պետը պատասխանել էր, թե լրագրողի պահանջածը, ոչ թե տեղեկատվություն է, այլ օրենքի պարզաբանում, ինչի լիազորությունն իրենք չունեն: Լրագրողը պահանջել էր նաեւ հարցը կարգավորող իրավական նորմի պատճեն, որը սակայն չէին տրամադրել:

Հաճախ հանդիպող մերժման անօրինական հիմքերից լրագրողները օրինակ են բերում նաեւ այն, որ պաշտոնյաներն ասում են՝ կա՛մ չեն տիրապետում պահանջվող տեղեկատվությանը, եւ կա՛մ իրավասություն չունեն տալու: Երբեմն նաեւ ասում են՝ ինֆորմացիան դեռ մշակման փուլում է, պետք է սպասել: Մարզային լրագրողներից շատերի խոսքերով, պաշտոնյաները հաճախ մերժում են տեղեկություն տրամադրել այն պատճառաբանությամբ, թե իրենք իրավասու չեն եւ «Երեւանից պիտի հրահանգ ստանան»: Օրինակ՝ մարզային լրագրողը պատմում է, որ Արարատի մարզում ժանտախտի կանխարգելման նպատակով իրականացրած հանդիպման ընթացքում մարզի գլխավոր անասնաբույժը հրաժարվել է տեղեկություններ տալ՝ պատճառաբանելով, թե ավելի բարձր մարմիններից պետք է համապատասխան հրահանգ ստանա: Գորիսի լրագրողներից մեկի խոսքերով էլ, տեղեկություններ տրամադրելու ցանկություն չունենալու դեպքում, որպես կանոն, պաշտոնյաները ինչոր տեղ են շտապում՝ հիմնականում մայրաքաղաք:

Լրագրողներից 32-ը կամ 30% ասում է, որ ավելի հաճախ պաշտոնյաները հակված են պարզապես մերժել՝ առանց հիմնավորելու, նշելու մերժման օրինական հիմքը կամ առանց հղում անելու օրենքի համապատասխան նորմին: Լինում են դեպքեր, երբ հիմնավորում են մերժումը անհեթեթ պատճառաբանություններով: Օրինակ, Արմավիրի քաղաքապետը հեռուստալրագրողի հարցմանն ի պատասխան ասել էր, թե կպատասխանի, եթե փոխվի հարցման ենթատեքստը:

Երբեմն էլ այնքան են ձգձգում տեղեկատվության տրամադրումը, որ այն արդեն հարկավոր չի լինում լրագրողին: Եւ վերջապես, մերժման հանդիպող հիմքերից մեկն էլ տեղեկատվությունը օրենքով պահպանվող գաղտնիք համարելն է: Պաշտոնյաները հիմնավորում են, թե տվյալ տեղեկությունները լրագրողներն իրավունք չունեն ստանալու: Լրագրողներից մեկը նշել է, որ հանրային գործառույթներ իրականացնող կազմակերպություններից մեկից երկար ժամանակ չի կարողացել ստանալ սակագների բարձրացման հիմնավորման մասին տեղեկություն այն պատճառաբանությամբ, թե դա առեւտրային գաղտնիք է: Մարզային հեռուստատեսության մի լրագրող էլ ցանկացել է նյութ պատրաստել իրենց շրջանում գտնվող զորամասի մասին: Նրան թույլ չեն տվել այցելել՝ հիմնավորելով, թե դա ռազմական գաղտնիք է:



- Ժամանակ չունեմ 32 հոգի կամ 30.4%
- Իրավունք չունեք ստանալու 26 հոգի կամ 24.7%
- Հիմնավորեք պահանջը 24 հոգի կամ 22.8%
- Քեզ չեմ տրամադրի 15 հոգի կամ 14.2%
- Ցանկություն չունեմ 9 հոգի կամ 8.5%

Այլ պատճառաբանությունների մեջ լրագրողներն ավելացրել են նաեւ, որ պաշտոնյաները հաճախ իրենք են որոշում, որ տվյալ թեման հետաքրքիր չէ հանրությանը: Ինֆորմացիա չեն ուզում տալ «Դա ո՞ւմ է հետաքրքիր» կամ «Ի՞նչ պարտադիր է այդ մասին գրեք» հարց-պատճառաբանություններով: Իսկ ընտրություններին նախորդող ժամանակաշրջանում՝ շուրջ 2 ամիս, շատ դժվար է լինում տեղեկություն ստանալ: «Կարծես ամեն ինչ կանգ առած լինի: Պաշտոնյաները վախենում են որեւէ ավելորդ խոսք ասել: «Եկեք ընտրություններից հետո»,- սա է միակ պատասխանը»,- ներկայացնում է Գյումրիի լրագրողը:

Ռադիոլրագրողներից մեկն էլ պատմում է, որ պաշտոնյան մերժել է իրեն հարցազրույց տալ այն բանից հետո, երբ լրագրողը չի համաձայնել պաշտոնյայի պայմանին. պատրաստած վերջնական նյութը ներկայացնել պաշտոնյային՝ խմբագրելու համար:

«Երբեւէ ձեզ տրամադրե՞լ են կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն» հարցին լրագրողներից 58-ը կամ 55 տոկոսը դրական պատասխան է տվել: Այս դեպքում, օրինակ, լրատվական գործակալության լրագրողը նախընտրում է կեղծ տեղեկատվությունը հրապարակել՝ հղում անելով այն տրամադրած պաշտոնական աղբյուրին: Ուշագրավ պատասխան էր տվել մարզային հեռուստալրագրողներից մեկը: Նա նշել է, որ առճակատման է բերում կեղծ եւ ճիշտ տեղեկատվություն տրամադրողներին: Կոտայքի մարզի մի լրագրող պատմում է, որ տարբեր համայքնի ղեկավարներից ցանկացել էր ճշտել մարզում Կառավարության կողմից իրականացվող ֆինանսական ծրագրերի ցանկի մասին տեղեկություններ: Որոշ համայնքների ղեկավարներ ոչ ստույգ ինֆորմացիա էին տվել, որը հետագայում ճշտվել է լրագրողի ուսումնասիրություններով եւ անմիջապես Կառավարությունից ստացված տեղեկությամբ: Մեկ այլ լրագրող էլ պատմում է, որ քաղաքապետարանի պաշտոնյայի տրամադրած տեղեկությունը հրապարակելուց հետո մարզպետարանի պաշտոնյան ահազանգել էր եւ պարզաբանել, որ հրապարակված ինֆորմացիան սխալ էր: Լրագրողը ստիպված տպագրել է նաեւ երկրորդ պատասխանը:

Տեղեկությունների հետաձգման կամ դրանց մի մասի տրամադրման դեպքում լրագրողներից շատերը նախընտրում են այլ աղբյուրներ գտնել՝ 75 հոգի: Իսկ 25 հոգին պարբերաբար հիշեցնում է կամ սպասում մինչեւ կստանա իրեն անհրաժեշտ ինֆորմացիան: Սպասելը լրագրողները նշել են միայն այն դեպքում, եթե նյութը հրատապ չէ: Մարզային լրագրողներից մեկը պատմում է, որ ավտովթարի մասին լուր հաղորդելու համար դիմել էր դեպքի վայր ժամանած ոստիկաններին, որոնք սակայն լրագրողին ոչ մի տեղեկություն չէին տվել՝ պատճառաբանելով, որ գործն ընթացքի մեջ է: Լրագրողը լուրը հաղորդել էր ականատեսների տեղեկությունների հիման վրա, նշելով, որ պաշտոնական տեղեկություններ չկան: Միայն 3 օր հետո, զանգերից եւ այցելություններից հետո էր հնարավոր եղել ոստիկանությունից ճշտել վթարի պատճառները եւ այլ մանրամասներ: Նյութը սրանից, սակայն, տուժել էր:

Ինտերնետային լրատվամիջոցի մի լրագրող ասում է, որ կապված այս լրատվամիջոցի առանձնահատկությունների հետ իրենք ինֆորմացիան ամենաարագը հասցնելու խնդիր ունեն եւ երբեք չեն կարող սպասել: Ինֆորմացիայի հետաձգման դեպքում նա շտապում է մեկ այլ աղբյուր գտնել, իսկ եթե անհնար է, ապա այդ լուրը չի տալիս:

Լրագրողներից քչերն են՝ 4 հոգի, որ հրաժարվում են նյութից այն պատճառով միայն, որ պաշտոնական տեղեկատվությունը ուշանում է կամ կիսատ է: «Լրագրողի պրոֆեսիոնալիզմից մեծ բան է կախված: Տեղին է ասված՝ դռնից հանում են, պատուհանից մտիր: Եթե հետեւողական լինենք, միշտ էլ կարելի է գտնել անհրաժեշտ ինֆորմացիան»,- ասում է հետաքննող մի լրագրող:

Լրագրողների մեծ մասը՝ 94 հոգի այն համոզմանն է, որ իր մասնագիտական պարտքն է ամբողջական տեղեկություն հասցնել հանրությանը: Այդ իսկ պատճառով, եթե պաշտոնյան տեղեկության մի մասն է տալիս, նրանք առաջնահերթ փորձում են գտնել այլ աղբյուրներ: 23 հոգի նշել է, որ տեղեկությունը հաղորդում է այդ մասով միայն եւ նյութում հրապարակում, որ պաշտոնյան խոստացել է, ասենք, 1 կամ 2 օրից մյուս մասն էլ տալ: «Այս դեպքում ստիպված պաշտոնյան զանգում եւ հաղորդում է ամբողջական տեղեկությունը»,- մեկնաբանում է մարզային հեռուստատեսության լրագրողը:

Ի վերջո. Ի՞նչ են անում լրագրողները անօրինական մերժումների դեպքում:

Հարցմանը մասնակցած 105 լրագրողների մեծ մասը՝ 67 հոգի կամ 64% նախընտրում է այդ մասին հրապարակել նյութում: Սակայն սա վերջին տարբերակն է: Նրանցից շատերը նախ փորձում են «անընդհատ դիմել»: 15 հոգի նշել է, որ եթե բանավոր է դիմել, ապա կրկին դիմում է գրավոր կամ միեւնույն պաշտոնյային, կամ նրա վերադասին: Ընդդիմադիր օրաթերթ ներկայացնող լրագրողներից մեկը նշել է, որ «նյութում այնպես եմ ոչնչացնում այդ պաշտոնյային, որ հետո ինքն է զանգում եւ հանդիպում խնդրում»: Հնարավոր այլ ճանապարհներով փորձում է տեղեկատվությունը ստանալ լրագրողների 24 տոկոսը (25 հոգի): Մարզային լրագրողների հավաստմամբ, մերժման դեպքերի հրապարակումը մեծիմասամբ տալիս է դրական արդյունք, հատկապես, եթե հրապարակումը տրվում է ոչ մարզային լրատվամիջոցով: Նրանք դա պատճառաբանում են այն բանով, որ մարզային պաշտոնյաները վախենում են իրենց «երեւանյան» ղեկավարներից, եւ թերթերում իրենց մասին որեւէ բացասական տեղեկության հայտնվելը կարող է աթոռը կորցնելու առիթ դառնալ: «Հետեւապես, նրանք հրապարակումից անմիջապես հետո զանգում են եւ տալիս անհրաժեշտ ինֆորմացիան, հաճախ՝ մի բան էլ ավել»,- ասում է Սիսիանի հեռուստալրագրողը:



Գաղտնիք չհամարվող տեղեկությունների մերժման դեպքում լրագրողներից շատերը նախ փորձում են ինֆորմացիան ստանալ տվյալ պաշտոնյայի վերադասից՝ 65 լրագրող կամ 62% դիմում է պարզապես վերադասին եւ բողոքարկում: Եթե մարզային լրագրողների կարծիքով, սա տեղեկություններ ստանալու արդյունավետ ճանապարհ է, ապա երեւանյան լրագրողներից շատերը միաժամանակ նշում են, որ վերադասը բացառիկ դեպքերում է վերացնում ստորադասի թույլ տված սխալը:

Բողոքարկման ձեւերից լրագրողներն ընտրել են նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին (օմբուցմենին) դիմելու տարբերակը՝ 15 հոգի: «Ոչ մեկին էլ չեմ բողոքի» պատասխանը ընտրել է 8 հոգի կամ 8%, պարզաբանելով, որ ոչ մեկին էլ չի վստահում, նույնիսկ դատարաններին:

Պետք է նշել, որ անօրինական մերժումները բողոքարկելու համար վերադաս մարմնին կամ մարդու իրավունքների պաշտպանին դիմելուց հետո միայն՝ որպես վերջնական քայլ են լրագրողների մեծամասնությունը նախընտրում դատարան դիմել: 105-ից միայն 29-ը կամ 28%-ն են ընտրել այս տարբերակը: Հիմնավորումներից է այն, որ պարզապես չեն հավատում կամ վստահում դատարանին, որ վերջինս կարող է հանդես գալ իրենց իրավունքները վերականգնող արդար եւ անկողմնակալ մարմնի դերում: Ինչպես նաեւ տեղեկատվությունը դատական երկար քննության ընթացքում հնանում է, եւ այն ստանալու անհրաժեշտությունը վերանում է: Այնուհանդերձ, պետք է նշել, որ անօրինական մերժումների վերաբերյալ դատական նախադեպեր արդեն իսկ կան ոչ միայն Երեւանում, այլեւ՝ մարզերում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 7 տարիների փորձը ցույց է տվել, որ տեղեկատվության անօրինական մերժումների վիճարկումը դատարանում բավականին զգոնացնում է պաշտոնյաներին, եւ հաջորդ անգամ արդեն գործը դատարան չի հասնում:

Այսպիսով, լրագրողներն այսօր ինֆորմացիա ձեռքբերելու եւ տարածելու իրենց իրավունքը հիմնականում փորձում են վերականգնել մերժման փաստը հրապարակելով: Սա թերեւս ամենամատչելի, սակայն նվազ արդյունավետ ձեւն է: Մյուս կողմից կա ամենաքիչը երկու հանգամանք, որոնցով կարելի է բացատրել, թե ինչու լրագրողները դատարան չեն դիմում ինֆորմացիայի տրամադրումը ապօրինի մերժելու դեպքում: Նախ՝ լրագրողը եւ կամ լրատվամիջոցը, հնարավոր է, չունենան այն միջոցները, որոնք պահանջվում են դատական գործընթացը սկսելու եւ մինչեւ վերջ հասցնելու համար եւ, երկրորդ՝ մինչեւ դատական գործընթացի ավարտը ինֆորմացիան կարող է հնանալ:

ԲԱԺԻՆ Ը

Տեղեկատվության մատչելիության խոչընդոտները

Տեղեկությունների ստացման հարցում լրագրողները հանդիպում են բազմաթիվ ու տարաբնույթ խոչընդոտների: Լրագրողների կարծիքով, որո՞նք են տեղեկատվության մատչելիության ցածր մակարդակի հիմնական պատճառները եւ խոչընդոտները:



Ինչպես երեւում է աղյուսակից, լրագրողներն ամենամեծ խոչընդոտները համարում են պետական պաշտոնյաների մտածելակերպը: Նրանցից շատերը նշում են, որ պաշտոնյաները իրենց տրամադրության տակ եղած ինֆորմացիան համարում են իրենց սեփականը եւ դրանց հետ վարվում են կամայական ձեւով: Օրինակ, 5 լրագրող նշել է ՀՀ առողջապահության նախարարության լրատվության բաժնի ղեկավարի նման պահվածքը: Ցանցային լրատվա-

միջոցներից մեկի լրագրողն ասում է, որ այս պաշտոնյան տեղեկություն չի տրամադրում՝ «***իր*** (պաշտոնյայի խոսքն է) մոտ չհավատարմագրված լրագրողին»: Տեղեկատվության տրամադրման օրինական հիմքերին ծանոթ չլինելու հանգամանքը եւս լրագրողները առանձնացրել են որպես պաշտոնյաների մտածելակերպի հետ կապված խոչընդոտ:

Մարզային լրագրողներից մի քանիսը նշել են, որ իրենց պետական կառույցներում տեղեկությունների տրամադրման գործընթացը համակարգված չէ, ավելին, շատ տեղերում չկան հասարակայնության հետ կապերի կամ լրատվության բաժիններ, իսկ պաշտոնյաներն էլ լրագրողների հետ աշխատելու հստակ մեխանիզմներ չունեն: Նրանք ինֆորմացիան տալիս են իրենց ցանկությամբ, իրենց հարմար պահին: 7 լրագրող որպես այլ խոչընդոտ նշել է նաեւ, որ լրատվության պատասխանատուներն իրենց վրա ավելի մեծ լիազորություններ են վերցնում, ավելի քիչ կատարում:

Այսպես. 57 լրագրող կամ 54% նշել է, որ պաշտոնյաները հիմնավորում են իրենց մերժումը, սակայն 42-ի համոզմամբ, այդ հիմնավորումները շատ հաճախ օրենքից չեն բխում: Նմանօրինակ մերժման հիմքերից են՝ ժամանակ չունեմ՝ 30%, իրավունք չունեք ստանալու՝ 25%, հիմնավորեք պահանջը՝ 23%, եւ կամ քեզ չեմ տրամադրի՝ 14%, ցանկություն չունեմ՝ 9%: Իրենց աշխատանքային պրակտիկայում կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն են ստացել լրագրողներից 58-ը կամ 55%: Տեղեկությունների հետաձգման կամ դրանց մի մասի տրամադրման դեպքում լրագրողներից շատերը նախընտրում են այլ աղբյուրներ գտնել՝ 75 հոգի կամ 71%: Իսկ 25 հոգին պարբերաբար հիշեցնում է կամ սպասում մինչեւ կստանա իրեն անհրաժեշտ ինֆորմացիան: Սպասելը լրագրողները նշել են միայն այն դեպքում, եթե նյութը հրատապ չէ: Լրագրողներից քչերն են՝ 4 հոգի կամ 4%, որ հրաժարվում են նյութից այն պատճառով միայն, որ պաշտոնական տեղեկատվությունը ուշանում է կամ կիսատ է:

Լրագրողների մեծ մասը՝ 67 հոգի կամ 64% նախընտրում է հրապարակել տեղեկատվության անօրինական մերժման դեպքերը: 15 հոգի նշել է, որ եթե բանավոր է դիմել, ապա կրկին դիմում է գրավոր կամ միեւնույն պաշտոնյային, կամ նրա վերադասին: Հնարավոր այլ ճանապարհներով փորձում է տեղեկատվությունը ստանալ լրագրողների 24% (25 հոգի): Անօրինական մերժումները լրագրողները բողոքարկում են վերադասին՝ 65 լրագրող կամ 62%, դատարան՝ 29-ը կամ 28%, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ 15 հոգի կամ 14% եւ կամ չեն բողոքարկում՝ 8 հոգի կամ 8%:

Տեղեկատվություն ստանալու ամենամեծ խոչընդոտը լրագրողները համարում են պետական պաշտոնյաների մտածելակերպը՝ 65 հոգի կամ 62%: Պետական մարմիններում տեղեկատվության տրամադրման համար սահմանված մեխանիզմների բացակայությունը եւս 57 լրագրողի (54%) կարծիքով լուրջ խնդիրներ է առաջացնում տեղեկություններ ստանալիս: Հարցմանը մասնակցած 105 լրագրողներից 46-ը (44%) նշել է, որ լրագրողները չգիտեն իրենց իրավունքների մասին: Իսկ օրենսդրական ընթացակարգերի բացակայության պատճառը որպես տեղեկատվության տրամադրման խոչընդոտ համարում են 38 լրագրող կամ 36%:

ԲԱԺԻՆ Թ

Ընտրական գործընթացներում տեղեկություններ ստանալու՝ լրագրողների փորձը

ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված տեղեկություն ստանալու իրավունքն ծանոթ է հարցված 105 լրագրողների մեծամասնությունը՝ 89 հոգի կամ 85%: «Ոչ» է պատասխանել 16 հոգի, ովքեր միաժամանակ նշել են, որ ընտրությունների հետ կապված նյութեր չեն պատրաստել:

Հետաքրքրական մեկ փաստ. ընտրական գործընթացները լուսաբանած 89 լրագրողից շատ քչերն են հանդիպել տեղեկատվության տրամադրման անօրինական մերժումների: 65 հոգի նշել է, որ կարողացել է շատ արագ ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկությունը, որոնք շատ տարբեր են եղել. ընտրացուցակներ, ընտրական հանձնաժողովների որոշումներ, նիստերի արձանագրություններ, քվեարկության արդյունքներին վերաբերող տեղեկություններ:

Ի՞նչ բնույթի տեղեկության եք ցանկացել ծանոթանալ

- Քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղեկություններին 52 հոգի 58%
- ընտրական հանձնաժողովների որոշումներին 49 հոգի 55%
- թեկնածուների գրանցման փաստաթղթերին 36 հոգի 40%
- ընտրացուցակներին 33 հոգի 37%
- նիստերի արձանագրություններին 31 հոգի 35%
- կուսակցությունների ֆինանսական հաշվետվություններին 25 հոգի 28%

Քվեաթերթիկների նմուշներին, թեկնածուների եւ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների հայտարարագրերի պատճեններին, կուսակցության կանոնադրությանն ու ծրագրի մասին տեղեկություններ ընտրական գործընթացները լուսաբանած 89 լրագրողից 19-ը կամ 21%-ն է ցանկացել ստանալ:

Մերժման դեպքերի հանդիպել է 24 լրագրող, այդ թվում՝ Տեղական ընտրական հանձնաժողովներում՝ 11 հոգի, ԿԸՀ-ում՝ 6 հոգի, Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում՝ 3, դատարաններում՝ 4 լրագրող:

Լրագրողների հավաստմամբ՝ հիմնականում մերժումները կամայական բնույթի են եղել: Սիսիանի լրագրողներից մեկը նշում է, որ Տեղական ինքնակառավարման մարմինների ժամանակ հանձնաժողովի նախագահն անհիմն պատճառաբանությամբ մերժել է տրամադրել այդ պահի դրությամբ քվեարկողների ընդհանուր թիվը: Թերթերի լրագրողներից մեկն էլ նշում է, որ վեճի ժամանակ հանձնաժողովի նախագահը որոշել է, որ լրագրողն այլեւս անելիք չունի եւ «***իր***» տարածքը պետք է անհապաղ ազատի:

«Դեռ մասնակցության թիվը պարզ չէ», «մի ժամ առաջ հաղորդեցի», «մենք դա ասելու իրավունքը չունենք», կամ «վատառողջ եմ», «տրամադրություն չունեմ» եւ այլն: Սրանք հիմնականում թեկնածուների շտաբերից եւ տեղամասային հանձնաժողովներից տրվող պատասխաններն են լրագրողներին:

Քվեարկության օրը լրագրողների մեծամասնությունը եւս անարգել է աշխատել. 89 հոգուց 74-ը նշել է, որ ստացել է իրեն անհրաժեշտ ինֆորմացիան: 15 լրագրող նշել են բազմաթիվ խոչընդոտներ: Հեռուստատեսային լրագրողները հիմնականում խնդիրներ են ունեցել նկարահանումների ժամանակ: Ա1+-ի լրագրողը պատմում է. «Տեղամասային կենտրոնների տարածքում մեզ մոտեցան զինվորական համազգեստով մարդիկ եւ չներկայանալով, պահանջեցին անջատել տեսախցիկները: Օրենքով ամրագրված լրագրողի իրավունքները փորձեցի հիշեցնել, սակայն ապարդյուն»: Մարզային լրագրողներից մեկն էլ պատմում է, որ չնայած բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ժամանակին ուղարկվել էին, այնուհանդերձ իրենց հեռուստաընկերությանը չէին գրանցել, որը եւ խոչընդոտել էր լուսաբանել ընտրական գործընթացները:

Հանձնաժողովի նախագահի զբաղված կամ տեղում չլինելու պատճառաբանությամբ եւս լրագրողները չեն կարողանում անհրաժեշտ տեղեկությունները ժամանակին ստանալ:

Անօրինական, կամայական մերժումների դեպքում լրագրողները նշում են, որ պնդում են իրենց իրավունքները եւ հասնում ցանկալի արդյունքի: Անհնարինության դեպքում հրապարակում են մերժումը: Հատկանշական է, որ ընտրությունների հետ կապված տեղեկությունների տրամադրման մերժումները ոչ մի լրագրող չի բողոքարկել դատարանում:

Այսպես. ամփոփելով, կարելի է նշել, որ ընտրական գործընթացները լուսաբանող լրագրողները ծանոթ են օրենքով իրենց

տրված տեղեկությունների ստանալու իրավունքին: Ընդ որում, նրանց մեծ մասը կարողանում է նաեւ տեղեկատվության մերժումները կանխել հենց օրենքի դրույթները մեջբերելով: Այսինքն, լրագրողները ոչ միայն ծանոթ են, այլեւ գործնականում կիրառում են Ընտրական օրենսգրքով սահմանված տեղեկությունների ստացման իրավունքի հիմքերը:

Կարելի է նշել, որ հիմնականում ընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկությունները մատչելի են լրագրողներին, եւ նրանք անարգել, առանց ավելորդ խոչընդոտների կարողանում են ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկությունները: Սակայն անօրինական խոչընդոտները դեռեւս տեղ են գտնում, հատկապես Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ: Ընտրությունները լուսաբանելիս իրենց իրավունքի խախտման դեպքերի են հանդիպել առավելապես հեռուստալրագրողները, երբ նրանց արգելել են նկարահանել ընտրական հանձնաժողովների աշխատանքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հարցմանը մասնակցել է 105 լրագրող. Երեւանից 60 հոգի, ՀՀ մարզային լրագրողներ՝ 40 հոգի, օտարերկրյա լրատվամիջոցների թղթակիցներ՝ 5 հոգի: Նրանք ներկայացնում են զանգվածային լրատվության միջոցների բոլոր տեսակները. տպագիր՝ 32-ը կամ 30.4%, հեռուստատեսություն՝ 35-ը կամ հարցվածների 33%, ռադիո՝ 16 հոգի կամ 15%, լրատվական գործակալություններ՝ 10 լրագրող կամ 9.5%, ցանցային մեդիա՝ 12-ը կամ 11.4%:

105 հոգուց 103-ը (կամ 98%) ունեն բարձրագույն կրթություն, միջնակարգ կրթություն ունեն միայն երկուսը: Ընդ որում, 64% ունի բարձրագույն լրագրողական կրթություն, իսկ 34% ունի բարձրագույն կրթություն ամենատարբեր ոլորտներում, թեեւ գերակշռում են հումանիտարները, մասնավորապես բանասիրությունը:

Առավել մեծ թիվ են կազմում վեցից տասը տարվա մասնագիտական փորձ ունեցող լրագրողները՝ 40%: Տասը եւ ավելի տարիների մասնագիտական աշխատանքային փորձ ունի լրագրողների 24%: Երեքից հինգ տարվա լրագրողական փորձ ունեն հարցվածների 16 տոկոսը, իսկ 12 տոկոսը՝ մեկից երկու տարվա: 10 հոգի կամ 8% մեկ տարուց քիչ է աշխատում այս մասնագիտությամբ:

- **Տեղեկատվություն ստանալու իրավունք**

Հարցմանը մասնակցած 105 լրագրողից 98-ը կամ 93.3% նշել է, որ ծանոթ է տեղեկատվություն ստանալու իրավական հիմքերին, մասնավորապես ՀՀ սահմանադրությամբ ամրագրված տեղեկատվության ազատությանն առնչվող դրույթներին եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին: Այնուհանդերձ գործնականում ոչ բոլորն են օգտվում օրենքով սահմանված իրենց իրավունքներից. լրագրողները նախընտրում են տեղեկություններ ստանալու բանավոր հարցմամբ, այնինչ գրավոր հարցումները հետագայում կարող են նրանց ապահովագրել տեղեկատվության ապօրինի մերժումներից: Լրագրողները հետեւողական չեն ապօրինի մերժումների դեպքում. նրանց մեծ մասը բավարարվում է մերժումների մասին հրապարակմամբ, մյուս մասն էլ մերժումը բողոքարկում է տվյալ պաշտոնյայի վերադասին: Դատարան շատ քչերն են ցանկանում դիմել: Այն պատճառաբանությունը, թե չեն վստահում դատարաններին եւ կամ դատական պրոցեսների ընթացքում անհրաժեշտ ինֆորմացիան դառնում է ժամանակավրեպ եւ կորցնում իր կարեւորությունը:

Լրագրողները փաստում են, որ չնայած տեղեկություններ ստանալու իրավունքը վերաբերում է յուրաքանչյուրին, պաշտոնյաները խտրականություն են դնում քաղաքացիների եւ լրագրողների միջեւ (102 լրագրող կամ 97%): Խտրական վերաբերմունք է նկատվում նաեւ տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչների հանդեպ: Լրագրողները նման վերաբերմունքը բացատրում են այն հանգամանքով, որ պաշտոնյաները կամ տեղյակ չեն տեղեկությունների տրամադրման իրավական հիմքերից կամ պաշտոնական տեղեկություններին վերաբերվում են որպես իրենց սեփականության:

- **Տեղեկատվության պաշտոնական եւ այլ աղբյուրներ**

105 լրագրողների ճնշող մեծամասնությունը տեղեկատվություն է ստանում պետական մարմիններից (92%) եւ փորձագետներից (72%): Հատկանշական է, որ ընկերներից, հարազատներից ստացված տարատեսակ տեղեկությունները լրագրողներից շատ քչերի համար են դառնում նյութի հիմք: Սակայն հաջորդ մի քանի հարցերի պատասխանները ցույց են տալիս, որ պաշտոնական տեղեկությունները լրագրողներից շատերը (75%) ստանում են ոչ պաշտոնական ճանապարհներով: Նրանք նշում են, որ տեղեկություններն առավել արագ եւ արդյունավետ կարող են ստանալ պաշտոնյաների կամ լրատվության պատասխանատուների հետ անձնական լավ հարաբերություններ ունենալու դեպքում միայն:

Արխիվային նյութեր գրեթե չեն օգտագործվում լրագրողների կողմից: Սա թերեւս պայմանավորված է այն հանգամանքով, որ հարցվածների մեծ մասը միայն լուր է պատրաստում եւ այն արագ տարածելու խնդիր ունի: Սակայն այս ցուցանիշը խոսում է նաեւ այն մասին, որ փաստաթղթերի հետ աշխատելու պրակտիկան դեռեւս ձեւավորված չէ մեր լրագրության մեջ: Նույնիսկ վերլուծական հոդվածներ եւ հետաքննություններ գրող լրագրողներից շատերը երբեւէ չեն օգտվել արխիվային փաստաթղթերից:

Պետական գերատեսչության մասին նյութ պատրաստելիս լրագրողների մեծամասնությունն օգտվում է միաժամանակ պաշտոնական ինտերնետային կայքերից (92%) եւ հասարակայնության հետ կապերի բաժնից՝ 90.4%: Նրանցից 3-ը, որ լրատվական գործակալության լրագրողներ են, միայն Ինտերնետից են օգտվում: Պաշտոնական տեղեկագրերը քչերի համար են ծառայում որպես տեղեկատվության աղբյուր (48%):

Այսօր արդեն Ինտերնետը լայնորեն կիրառվում է եւ լրագրողների, եւ պաշտոնյաների կողմից: Որեւէ գերատեսչության մասին տե-

ղեկություն ստանալու համար լրագրողներն առաջնահերթ օգտվում են պաշտոնական կայքերից, չնայած, ինչպես նրանք են փաստում, ոչ բոլոր գերատեսչական կայքերն են, որ կարող են օգտակար եւ հիմնավոր ինֆորմացիա տալ: Դրանցից շատերը պարունակում են այնպիսի տեղեկատվություն, որը գովազդում է տվյալ գերատեսչությունը եւ չի պարունակում հանրային կարեւորության տեղեկատվություն: Միեւնույն ժամանակ գերատեսչությունների կայքերը պարբերաբար չեն թարմացվում, հետեւաբար եւ չեն ծառայում իրենց հիմնական նպատակին:

- **Պաշտոնական տեղեկատվություն ստանալու՝ լրագրողների փորձը**

Հարցմանը մասնակցած 105 լրագրողներից 82-ը կամ 78% նշել է, որ ինֆորմացիա տրամադրելիս պաշտոնյաները սովորաբար անձը հաստատող փաստաթուղթ չեն պահանջում լրագրողներից: Հեռեւստատեսության շատ լրագրողներ դա բացատրում են նրանով, որ «տեսախցիկների առկայությունը եւ խոսափողին նշված լոգոն արդեն իսկ փաստաթուղթ են»: Մի քանիսն էլ նշել են, թե իրենց արդեն ամենուր ճանաչում են, եւ փաստաթղթի կարիք չունեն: Մեկ լրագրող է միայն պատասխանել, որ առանց սպասելու ինքն է ներկայացնում փաստաթուղթը եւ համարում է, որ դա լրագրողական էթիկայի կարեւորագույն պահանջներից է:

Լրագրողներից շատերը բաց կամ փակ ոլորտ/գերատեսչություն են ընտրել այն մարմնին, որի գործունեությունը երբեւէ չեն լուսաբանել: Սա խոսում է այն մասին, որ նույնիսկ լրագրողների մոտ կան արդեն ձեւավորված կարծրատիպեր, եւ օրինակ փակ գերատեսչության մասին հարցնելիս, առաջին հերթին, մարդկանց մտքին գալիս է ոստիկանությունը կամ ուժային կառույցները: Բաց եւ հրապարակային գործող գերատեսչությունների մասին հարցնելիս՝ առաջին հերթին նշում են մշակույթի կամ կրթության ոլորտը, սակայն հաճախ պարզվում է, որ նրանք երբեւէ չեն դիմել այդ կառույցներին, պարզապես լսել են իրենց ծանոթներից:

Այնուհանդերձ, հարցումների արդյունքներով՝ 105 լրագրողների 45.7%-ը ամենաբաց եւ հրապարակային, տեղեկությունների տրամադրման հստակ ընթացակարգեր եւ լրագրողների հետ արդյունավետ աշխատառճ ունի Արտաքին գործերի նախարարությունը: Այս կարծիքն են հայտնել ներառյալ նաեւ հարցմանը մասնակից օտարերկրյա լրատվամիջոցների բոլոր հինգ լրագրողները: Որպես փակ, տեղեկատվության առումով դժվարամատչելի եւ լրագրողների հետ աշխատելու կամայական կարգերով գերատեսչությունն-

ից գրեթե հավասար ցուցանիշներով առաջին եռյակում են Ազգային անվտանգության ծառայությունը (38%), Ոստիկանությունը եւ Պաշտպանության նախարարությունը (հավասարապես՝ 36%):

Տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք թվում է, թե առավել մատչելի եւ հրապարակային պետք է գործեին հանրության համար, ըստ լրագրողների՝ առավել փակ կառույցներից են: Լրագրողների ընդամենը 23 տոկոսն է կարծում, որ թաղապետարանից հեշտ է տեղեկատվություն ստանալը, եւ 17 տոկոսն է կարծում, թե համատիրությունից հեշտ է տեղեկություն ստանալը:

Հիմնականում պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում չի գործում տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու մեկ միասնական կարգ:

- **Տեղեկություն ստանալու հարցում**

105 լրագրողներից 50-ը կամ 47.6% մշտապես նախընտրում է հարցման բանավոր ձեւը: Հաճախ են պաշտոնյաներին բանավոր դիմում լրագրողների 31.4%: Լրագրողները նշում են, որ տեղեկությունների ձեռք բերման ամենաարագ եւ արդյունավետ միջոցը պաշտոնյաների հետ անձնական շփումներն են:

Ներկայացված պատասխաններից կարելի է եզրակացնել.

1. Լրագրողները նախընտրում են տեղեկություն ստանալ բանավոր, քանի որ օրենքով հարցումներին պատասխան տալու նախատեսված ժամկետները (5-օրյա ժամկետ) բավականին երկար են հատկապես լրատվություն հաղորդող լրագրողների համար:
2. Լրագրողները թեպետ գիտեն օրենքով սահմանված գրավոր դիմելու եւ պատասխան ստանալու իրենց իրավունքի մասին, սակայն գործնականում չեն օգտագործում օրենքը, քանի որ չեն գիտակցում դրա կարեւորությունը իրենց աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու համար:
3. Գրավոր դիմելը կարող է լրագրողներին ապահովել ապօրինի մերժումներից: Նախ, պրակտիկան ցույց է տալիս, որ եթե պաշտոնյաները բանավոր զրույցի ժամանակ կարող են շրջանցել հարցը, կամ պարզապես մերժել, գրավոր հարցմանը նրանք առավել զգույշ են վերաբերվում եւ ստիպված են լինում պատասխանել: Իսկ մերժելու դեպքում ստիպված են հղում կատարել օրենքով սահմանված օրինական հիմքին, ինչը պարտադիր չէ բանավոր մերժման դեպքում: Երկրորդ, գրավոր մերժումները կարող են բողոքարկման ապացույց-հիմք դառնալ:

Նշենք, որ ոչ միայն լրագրողներն են նախընտրում բանավոր հարցման ձեւը, այլեւ պաշտոնյաներն էլ մեծիմասամբ բանավոր են պատասխանում: Լրագրողներից 49-ը հաճախ է բանավոր ստանում իրեն անհրաժեշտ տեղեկությունները, իսկ 45-ը՝ մշտապես: Հարցմանը մասնակից լրագրողների գերակշիռ մասը (98 հոգի կամ 93.3%) երբեւէ չի վճարել տեղեկատվության համար: Սա թերեւս պայմանավորված է այն հանգամանքով, որ գրավոր ստացված տեղեկությունները հիմնականում չեն գերազանցել 10 էջի սահմանը, որը գերազանցելու դեպքում է միայն տեղեկատվություն տրամադրողին ՏԱ մասին օրենքը իրավունք տալիս գումար պահանջել:

- **Տեղեկատվության մերժում**

Հարցմանը մասնակցած 105 լրագրողներից 75-ը կամ 71.4% աշխատանքային պրակտիկայում հազվադեպ է մերժում ստացել, իսկ 16 հոգի կամ 15.2% տեղեկություն պահանջելիս երբեք չի հանդիպել մերժման: Միայն 14 հոգի կամ 13.3% է նշել, որ հաճախ են պաշտոնյաները մերժել, իսկ մշտապես ոչ ոք չի մերժվել:

Պաշտոնյաների մերժման հիմքերը խիստ բազմազան են: Հնայած լրագրողները նշում են, որ պաշտոնյաները հիմնականում հիմնավորում են իրենց մերժումները, սակայն, լրագրողների հավաստմամբ, այդ հիմնավորումները շատ հաճախ օրենքից չեն բխում: Նմանօրինակ մերժման հիմքերից են՝ ժամանակ չունեմ, իրավունք չունեք ստանալու, հիմնավորեք պահանջը եւ կամ՝ քեզ չեմ տրամադրի:

Տեղեկությունների հետաձգման կամ դրանց մի մասի տրամադրման դեպքում լրագրողներից շատերը նախընտրում են այլ աղբյուրներ գտնել՝ 71.4%: Իսկ 25 հոգին պարբերաբար հիշեցնում է կամ սպասում մինչեւ կստանա իրեն անհրաժեշտ ինֆորմացիան: Սպասելը լրագրողները նշել են միայն այն դեպքում, եթե նյութը հրատապ չէ: Լրագրողներից քչերն են՝ 4 հոգի, որ հրաժարվում են նյութից այն պատճառով միայն, որ պաշտոնական տեղեկատվությունը ուշանում է կամ կիսատ է:

Հարցմանը մասնակցած լրագրողների մեծ մասը 63.8% նախընտրում է հրապարակել տեղեկատվության անօրինական մերժման դեպքերը: Սակայն սա վերջին տարբերակն է: Նրանցից շատերը նախ փորձում են «անընդհատ դիմել»: Եթե բանավոր են դիմել, ապա կրկին դիմում են գրավոր կամ միեւնույն պաշտոնյային, կամ նրա վերադասին:

Ամենից հաճախ անօրինական մերժումները լրագրողները բողո-

քարկում են տվյալ պաշտոնյայի վերադասին՝ 62%: Դատարանին իրենց խախտված իրավունքների վերականգնումը վստահում են՝ 29-ը կամ 28%, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ 15 հոգի կամ 14.2%:

- **Տեղեկատվության մատչելիության խոչընդոտները**

Պաշտոնական տեղեկատվության մատչելիությունը Հայաստանում շարունակում է մնալ լուրջ խնդիր: Չնայած պաշտոնյաներն ընդունում են, որ տեղեկատվություն տրամադրելն իրենց պարտականությունն է, պրակտիկան ցույց է տալիս, որ պաշտոնական տեղեկատվության հասանելիությունը դեռեւս կարելի է համարել անբավարար: Որպես հիմնական խոչընդոտ լրագրողները նշել են պետական պաշտոնյաների մտածելակերպը՝ 65 հոգի կամ 62%:

Պետական մարմիններում տեղեկատվության տրամադրման համար սահմանված մեխանիզմների բացակայությունը եւս 57 լրագրողի (54.2%) կարծիքով լուրջ խնդիրներ է առաջացնում տեղեկություններ ստանալիս: Հարցմանը մասնակցած 105 լրագրողներից 46-ը (44%) նշել է, որ լրագրողները չգիտեն իրենց իրավունքների մասին: Իսկ ընթացակարգերի բացակայության պատճառը որպես տեղեկատվության տրամադրման խոչընդոտ համարում է 38 լրագրող կամ 36%:

Լրագրողներից շատերը փաստում են, որ պետական մարմիններում չկա տեղեկատվության տրամադրման միասնական համակարգ: Մի մարմնում այդ գործառույթն իրականացնում է հանրության հետ կապերի վարչությունը, մյուսում՝ մամուլի ծառայությունը, երրորդում՝ քարտուղարությունը կամ աշխատակազմի ղեկավարը:

- **Ընտրական գործընթացներում տեղեկություններ ստանալու՝ լրագրողների փորձը**

Ընտրական գործընթացները լուսաբանող լրագրողները ծանոթ են օրենքով իրենց տրված տեղեկություններ ստանալու իրավունքին: 105 լրագրողների մեծամասնությունը՝ 89 հոգի կամ 84.7%: «Ոչ» է պատասխանել 16 հոգի, ովքեր միաժամանակ նշել են, որ ընտրությունների հետ կապված նյութեր չեն պատրաստել:

Լրագրողներին հաջողվել է կանխել տեղեկատվության անօրինական մերժումները՝ օրենքի դրույթները մեջբերելով: Այսինքն, լրագրողները ոչ միայն ծանոթ են, այլեւ գործնականում կիրառում

են Ընտրական օրենսգրքով սահմանված տեղեկությունների ստացման իրավունքը:

Ընտրական գործընթացները լուսաբանած 89 լրագրողներից 65-ը նշել է, որ կարողացել է շատ արագ ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկությունը: Մերժման դեպքերի հանդիպել է 24 լրագրող, այդ թվում՝ տեղական ընտրական հանձնաժողովներում՝ 11 հոգի, ԿԸՀ-ում՝ 6 հոգի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում՝ 3, դատարաններում՝ 4 լրագրող:

Քվեարկության օրը լրագրողների մեծամասնությունը եւս անարգել է աշխատել. 89 հոգուց 74-ը նշել է, որ ստացել է իրեն անհրաժեշտ ինֆորմացիան: 15 լրագրող, որոնցից 10-ը հեռուստատեսային լրագրողներ են, նշել է, որ հիմնականում խնդիրներ է ունեցել նկարահանումների հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կառավարությանն ուղղված առաջարկություններ.

- ***Թափանցիկ գործելու եւ օրենքը կիրառելու պատրաստակամություն:*** Պետական կառավարման մարմինների ղեկավարները պետք է հզոր քաղաքական կամք ցուցաբարեն լրագրողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքն ապահովելու եւ տեղեկատվության ազատությանն առնչվող օրենսդրությունը կյանքի կոչելու համար:

- ***Ներքին համակարգեր***:

- Կառավարությունը պետք է բոլոր պետական մարմինների համար մշակի տեղեկատվության կառավարման միասնական ընթացակարգ: Կարեւոր է նաեւ, որ լրագրողների տեղեկություն ստանալու հարցումները գրանցվեն առանձին եւ դրանց առանձին ընթացք տրվի՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներին համապատասխան:
- Անհրաժեշտ է բոլոր պետական կառավարման մարմինների լրատվության կամ հասարակայնության հետ կապերի բաժինների համար մշակել եւ ընդունել մեկ միասնական քաղաքականություն:
- Անհրաժեշտ է բոլոր պետական կառավարման մարմինների համար ընդունել եւ կիրառել տեղեկատվության տրամադրման մեկ միասնական համակարգ՝ մասնավորապես անհրաժեշտ է ներդնել ՏԱ մասին օրենքով սահմանված ՏԱ պատասխանատուի ինստիտուտը պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններում:

- ***Կարգերի ընդունում:*** Անհրաժեշտ է մշակել եւ ընդունել ենթաօրենսդրական ակտեր՝ պարզեցնելու համար տեղեկատվության գրանցումը, հաշվառումը եւ պահպանումը: Մասնավորապես, պետք է մշակվեն եւ ընդունվեն հետեւյալ ենթաօրենսդրական ակտերը.

  - Տեղեկատվությունը տրամադրելու համար վճարման կարգը,
  - Տեղեկատվության գրանցման, դասակարգման եւ պահպանման կարգը, որի հիման վրա տեղեկատվություն տնօրինողները պետք է մշակեն տեղեկատվություն տրամադրելու, դասակարգելու եւ գրանցելու սեփական ընթացակարգերը:

- ***Տեղեկատվության համար պատասխանատու պաշտոնյաներ:*** Տեղեկատվության համար պատասխանատու պաշտոնյաների նշանակման գործընթացը շատ դանդաղ է ընթանում, հատկապես տեղական ինքնակառավարման մարմիններում: Մի մարմնում տեղեկատվության տրամադրման գործառույթն իրականացնում է հանրության հետ կապերի վարչությունը, մյուսում՝ մամուլի ծառայությունը, երրորդում՝ քարտուղարությունը կամ աշխատակազմի ղեկավարը: Անրաժեշտ է արագացնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու պաշտոնյաների նշանակումը՝ տեղեկատվություն տրամադրելու գործընթացին նպաստելու նպատակով:

- ***Ինտերնետային կայքերի ստեղծում եւ պարբերաբար թարմացում:*** Բոլոր պետական մարմինները պետք է առկա տեղեկատվությունը տեղադրեն իրենց պաշտոնական ինտերնետային կայքերում՝ տեղեկատվության մատչելիության գործընթացը հեշտացնելու համար: Այն մարմինները, որոնք դեռեւս չունեն պաշտոնական ինտերնետային կայքեր, անհրաժեշտ է ստեղծել եւ տեղեկատվությունը մատչելի դարձնել ինտերնետի միջոցով: Այս նպատակի համար պետք է ֆինանսական միջոցներ հատկացվեն պետբյուջեից: Միաժամանակ, տեղեկատվությունն ինտերնետով հասանելի դարձնելը չպետք է դիմողներին խանգարի գրավոր կամ բանավոր հարցումներ ներկայացնել եւ ստանալ բանավոր կամ գրավոր պատասխան:

- ***Օրենքով սահմանված ժամկետների ապահովումը:*** Անհրաժեշտ է, որ տեղեկություն ստանալու բոլոր հարցումները պատասխան ստանան օրենքով սահմանված ժամկետներում: Պատասխանը հետաձգելու դեպքում անհրաժեշտ է 5-օրյա ժամկետում լրագրողին տեղեկացնել հետաձգման ժամկետի եւ պատճառների մասին:

- ***Մերժումների հիմնավորում:*** Տեղեկատվությունը մերժելիս անհրաժեշտ է հիմնավորել գրավոր (եւ՛ բանավոր, եւ՛ գրավոր հարցումների դեպքում)՝ հղում անելով օրենքի այն դրույթին, որի համաձայն մերժվում է տեղեկատվության տրամադրումը:

- ***Դիմողների նկատմամբ հավասար վերաբերմունք***: Դիմողների նկատմամբ խտրականությունը պետք է ընդհանրապես բացառվի: Բոլոր լրատվամիջոցների ներկայացուցիչները

պետք է տեղեկատվությունը ձեռքբերելու հավասար հնարավորություններ ունենան: Բոլոր լրագրողների համար աշխատանքի պայմանները պետք է լինեն նրանց աշխատանքին նպաստող եւ ոչ խտրական: Լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվությունը բոլոր լրագրողներին պետք է տրամադրվի միաժամանակ, իսկ նախատեսվող միջոցառումների ճշգրիտ ժամանակի եւ վայրի մասին նրանք պետք է տեղեկացվեն դրանք սկսվելուց առաջ՝ ողջամիտ ժամկետում:

- ***Ընթացիկ ուսուցում:*** Խորհուրդ է տրվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ դասընթաց ներառել համալսարանների, հատկապես ժուռնալիստիկայի եւ իրավաբանական ֆակուլտետների ուսումնական պլաններում:
- ***Բողոքարկման անկախ համակարգ:*** Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը պետք է ավելի ակտիվ լինի խախտման դեպքերը քննելիս եւ մարդկանց տեղեկատվության մատչելիության խախտված իրավունքը պաշտպանելու ժամանակ համապատասխան միջոցներ ձեռնարկի: Առաջարկում ենք, որ մարդու իրավունքների պաշտպանն ունենա հատուկ օգնական կամ տեղակալ, որը կզբաղվի տեղեկատվության մատչելիությանն առնչվող բողոքներով:

Լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակությանը եւ հանրության ուղղված առաջարկություններ

Զանգվածային լրատվամիջոցներ:

- Լրագրողներին խորհուրդ է տրվում ակտիվորեն օգտագործել ՏԱ մասին ՀՀ օրենքը: Տեղեկություններ ստանալու համար առավել հաճախ դիմեն գրավոր՝ ապօրինի մերժումները հետագայում բողոքարկելու համար: Լրագրողները պետք է հետամուտ լինեն, որ պաշտոնյաները տեղեկությունը մերժելիս տան գրավոր հիմնավորում:
- Մերժումներ ստանալիս պետք է հետամուտ լինեն իրենց խախտված իրավունքը վերականգնելուն, հատկապես դատարանի եւ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին դիմելով:
- Կոչ ենք անում լրագրողներին ակտիվորեն լուսաբանել տեղեկատվության ազատության հետ կապված խնդիրները, որպեսզի հասարակությունը տեղյակ լինի տեղեկատվութ-

յան մատչելիության իրավունքին: Տեղեկատվության ազատության գաղափարը պետք է լայնորեն գովազդվի եւ դրա կիրառումը պետք է ի ցույց դրվի: Լրագրողները կարող են դառնալ տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման վերահսկողները, ինչպես նաեւ այս օրենքի ամենաակտիվ օգտագործողները՝ այդպիսով նպաստելով երկրում թափանցիկ իշխանության հաստատմանը:

- Բոլոր այն բուհերում, որտեղ գործում է ժուռնալիստիկա մասնագիտացումը, ուսումնական պլաններում պետք է ներառվի ՏԱ մասին հատուկ դասընթաց, որը կարող է նաեւ կազմել ԶԼՄ օրենսդրություն առարկայի մի մասը:

Քաղաքացիական հասարակություն:

- ***Օրենքի հանրային օգտագործում:*** ՀԿ-ներին եւ հասարակության անդամներին խրախուսում ենք ակտիվորեն օգտագործել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը եւ օգնել մյուսներին օգտագործել այն խորհրդատվության եւ դատական գործերի միջոցով, ինչպես նաեւ մշտապես դիտարկել պետական մարմիններում օրենքի կիրառման գործընթացը:
- ***Ուսուցումներ:*** Անհրաժեշտ է հատուկ ուսումնական դասընթացներ մշակել եւ անցկացնել լրագրողների համար՝ բացատրելու՝ տեղեկություն ստանալու իրավունքի իրավական երաշխիքները եւ թե ինչպես կարող են առավել արդյունավտ օգտագործել օրենսդրությունը այս իրավունքի իրականացման համար:
- ***Ուղեցույցների մշակում:*** Ուսուցումների հաջող եւ արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ է մշակել եւ հրապարակել հատուկ գործնական ուղեցույցներ լրագրողների համար՝ ինչպես օգտագործել ՏԱ մասին օրենսդրությունը: Այս իմաստով օգտակար կարող է նաեւ լինել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մշակած եւ հրապարակած ուղեցույցների վերատպումը եւ բաժանումը խմբագրություններին:
- ***Հանրային գիտակցության բարձրացում:*** Քաղաքացիական հասարակության խմբերին առաջարկվում է քայլեր ձեռնարկել հասարակությանը՝ տեղեկություն ստանալու իրավունքին եւ այն կիրառելու մեխանիզմներին իրազեկելու ուղղությամբ:

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/32, թուղթ՝ օֆսեթ
Ք. Երևան, Ղ. Փարպեցի 26/26 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am